Azg Ազգ

20 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 32 (3926)

Ըստ Populus-ի Exit-poll-ի՝ հաղթել է Սերժ Սարգսյանը

Բրիտանական Populus հարցախուզական կազմակերպությունը ելային հարցում՝ exit poll է անցկացրել 126 ընտրատեղամասերում եւ ստացել հետեւյալ արդյունքները:

Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանը նախագահական ընտրություններում հավաքել է ընտրողների ձայների 57.1%-ը: Populus-ի տվյալներով, երկրորդ տեղում է Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ձայների 17.4%-ով, երրորդ տեղում՝ «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը՝ 14.6%: Չորրորդ տեղում է Դաշնակցության բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը՝ 5.98%:

Populus-ի տվյալներով, մնացած 5 թեկնածուները հավաքել են 1.6%-ից ոչ ավել ձայն: Հաղորդվում է, որ հարցվել է մոտ 12 հազար ընտրող: Հարցախույզն անցկացրել են 250 աբխազակիցներ Հայաստանի ողջ տարածքում, ընդամենը 12 ժամվա ընթացքում: Populus-ի տվյալներին առաջին արձագանքողներից էր Ռոյթեր գործակալությունը:

Ըստ նախնական արդյունքների, ընտրողների 69,25 տոկոսը մասնակցել է նախագահական ընտրություններին

Ո՞ւմ էֆեքթ-փոյն է ձիշտ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ երեկոյան, ընտրությունների ավարտից մի փոքր առաջ ՀՀ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի մամուլի ծառայության տարածած հայտարարությունը փաստորեն պատասխան էր մյուս թեկնածուներից Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցների էլեկտրոնային լրատվամիջոցներով տարածվող զանազան հայտարարություններին եւ հրապարակումներին, մամուլի ասուլիսներին, ըստ որոնց Տեր-Պետրոսյանն, իբր, հաղթում էր, կամ նրա կողմնակիցներին տարբեր ընտրատարածքներում եւ ընտրատեղամասերում ծեծում են, վռնդում, ընտրությունները կեղծվում են եւ այլն: Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի հայտարարությունը Տեր-Պետրոսյանի շտաբի հայտարարությունները համարում էր իրավական եւ ժողովրդավարական գործընթացի հետ կապ չունեցող, ինչի որ դրանք ընտրական հանձնաժողովների արձանագրություններից առաջ են արված՝ կանխելով բազմաթիվ տեղական, միջազգային դիտորդական առաքելությունների գնահատականները եւ ակնհայտորեն չեն համապատասխանում Հայաստանի ընտրողների ճնշող մեծամասնության կարծիքին, իրենց էությամբ եւ բնույթով հակաժողովրդավարական եւ եւ հակաօրինական են. «Սա է խաղաղական անհանդուրժողականություն եւ ծայրահեղականություն որդեգրած Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ նրա թիմի իրական բնութագիրը», ամփոփում էր հայտարարությունը:

Առհասարակ երեկ տարբեր հակադիր լրատվամիջոցներով ընտրությունների ընթացքին հետեւելով կարելի էր նկատել, որ Հայաստանում ընտրական գործընթացին զուգահեռ ընթանում է մի այլ գործընթաց՝ հիմնական քվեորդիների միջեւ ընտրանքվում է քաղաքական ուժերի պատերազմը, այս անգամ՝ թվերով, հայտարարություններով, «կեղծում ես՝ չէ, դու ես կեղծում» փոխադարձ մեղադրանքներով:

Բայց մինչ այդ հիմնական իրադարձությանը՝ ընտրությանը հայ ընտրողի մասնակցության մասին: ԿԸՀ հրապարակած տվյալներով՝ 1 641 672 քաղաքացի կամ 2 328 320 ընտրողների 69, 25 տոկոսը մասնակցել է ընտրություններին: Այս թիվը կարող է ավելանալ՝ ժամը քսանին դեռեւս ընտրատեղամասերում գտնվող ընտրող քաղաքացիների հաշվին, հենց այս պատճառով էլ ժամը 20-ին երեկ 1908 տեղամասի նախնական արդյունքն էր հայտնվել 1923-ից: Երեւանում ընտրություններին մասնակցել է 530575 մարդ:

Ասենք, որ յուրաքանչյուրս, ով ընտրել է, երեկ առավոտյան տեսել է հանգիստ մթնոլորտ: Ժամը 12-ից հետո արդեն ընտրողները հերթեր էին գոյացրել քվեարկության սրահներում: Ճիշտ է, լավ նայելու դեպքում կարելի էր հայտնաբերել հայկական հիվանդությունը՝ տախտներով, գազելներով եւ այլ մեծենաներով ընտրողներ էին բերվում ընտրատեղամաս, բայց ընդհանուր առմամբ նկատելի էր, որ հայ ընտրողն ակտիվ է, ցանկություն ունի իր ընտրությամբ մասնակցելու երկրի կառավարմանը, եւ բոլորովին չեն արդարանում հոդեսեսների այն կանխատեսումները, թե իբր երկրի ճակատագրի հանդեպ անտարբերները շատ են: Օրվա երկրորդ կեսին կամ, ավելի ճիշտ, ժամը 15-ին տարբեր վկայություններ կային մի փոքր լարվածության մասին, որը բանի գնաց թափ հավաքեց:

Տես էջ 2

Ընտրությունների արդյունքները 00.00-ի դրությամբ

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գիշերվա ժամը 1.00-ին ՀՀ նախագահի թեկնածուները ստացել էին հետեւյալ ձայները՝ Սերժ Սարգսյանը՝ 193.921, Լեւոն Տեր-Պետրոսյան՝ 52.548, Արթուր Բաղդասարյան՝ 50.309, Վահան Հովհաննիսյան՝ 18.787, Վազգեն Մանուկյան՝ 1845, Արաբես Գեղամյան՝ 1219, Տիգրան Կարապետյան՝ 1700, Արման Մելիքյան՝ 824, Արամ Հարությունյան՝ 536: Հիշեցնենք, որ տանք 12.00-ի տվյալներն են, որոնք on-line ռեժիմով փոփոխվում է ողջեն մեկ:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Փետրվար. հարատեւող վերածնունդ

ԿԻՄ ԶԱԲԻԹԵՅԻՆ
Ստեփանակերտ

Փետրվարի 20-ը ԼՂՀ կառավարության որոշմամբ ոչ աշխատանքային օր է Արցախում, ինչը պայմանավորված է Ղարաբաղյան շարժման 20-ամյակի տոնակատարությամբ: Արցախցիների համար փետրվարը առանձնահատուկ նշանակություն ունի, քանզի 1988-ի փետրվարին սկիզբ առավ ազգային-ազատագրական պայքարը: Իսկ այս օրը հատկանշական է, որովհետեւ ուղիղ քսան տարի առաջ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ն Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին: Խորհրդային մենաշնորհի համար ինքնավար կազմավորման գերագույն մարմնի նման որոշումն ավելի քան համարձակ էր: Այդ էր պատճառը, որ միութենական ղեկավարությունը սկզբնական շրջանում շտապահար վիճակում էր: Վերակառուցման ուղեգիծ, որն այսօրվա տերմինաբանությամբ նշանակում էր ժողովրդավարություն, հուսալի գործընկերոջ վարչակարգն ամեն կերպ փորձում էր ապակողմնորոշել կայսրության մյուս ժողովուրդներին՝ Ղարաբաղյան շարժումն անվանելով ծայրահեղականների գործ:

Տես էջ 3

49 ՏԱՐԻ ԲԱՑԱԿԱՅԻ ՀԵՏՈ

Ֆիդել Կաստրոն հեռանում է

Կուբայի ղեկավար Ֆիդել Կաստրոն երեկ հայտարարել է, որ վայր է դնում իր լիազորությունները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսիայի լրատվամիջոցներ:

Կուբայի կոմկուսի պատգամավորներ «Գրանմայում» հրապարակված նամակում Կաստրոն հայտարարում է, որ ինքը մտադիր չէ այլեւս զբաղեցնել պետական բարձրագույն պաշտոնները՝ Պետխորհրդի նախագահի եւ բանակի գլխավոր հրամանատարի: «Ես թեկնածությունս չեմ առաջադրի այդ պաշտոններում եւ չեմ ընդունի դրանք զբաղեցնելու առաջարկությունը», ասվում է Կաստրոյի նամակում:

2006-ի հուլիսին ծանր վիրահատությունից հետո թաքնվելով Ֆիդել Կաստրոն սեփական լիազորությունները ժամանակավորապես հանձնել էր կրտսեր եղբորը՝ Ռաուլին: Վիրահատությունից հետո Կաստրոն գրեթե չէր երեւացել հանրությանը, բայց ձեւականորեն մնում էր Պետխորհրդի նախագահի եւ զորքերի գլխավոր հրամանատարի պաշտոններում:

2007-ի դեկտեմբերին Կաստրոն առաջին անգամ հայտարարել էր, որ ինքը թերեւս հոգեւորական տա եւ իր տեղը զիջի երիտասարդներին: Այս տարվա հունվարի 20-ին նա հերթական անգամ ընտրվեց խորհրդարանի պատգամավոր: Փետրվարի 24-ին խորհրդարանն իր առաջին նիստում պետք է ընտրի Պետխորհրդի անդամներին եւ նախագահին: Ֆիդել Կաստրոն Կուբայի անփոփոխ ղեկավարն է 1959 թվականից:

«Անկախ» Կոսովո՝ պառակտված Եվրոմիությա՞մբ

ԱՂԱՎՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Փետրվարի 17-ին հրավիրված արտահերթ նիստում Կոսովոյի խորհրդարանը քվեարկությամբ ընդունեց երկրամասի անկախության հռչակագիրը: «Այս պահից Կոսովոն հայտարարվում է անկախ եւ ինքնիշխան պետություն», խորհրդարանում հայտարարեց Կոսովոյի վարչապետ Հաշիմ Թաչին: Արդեն երկուշաբթի եվրոմիության երկրների արտգործնախարարների բյուսելյան հավաքում ընդհանուր դիրքորոշում չստացվեց, եւ Կոսովոյի անկախության հռչակման ճանաչումը մնաց երկրներին՝ առանձին-առանձին:

Ամեն դեպքում, առաջին երկիրը, որ դրական արձագանքեց Կոսովոյի անկախացմանը, Աֆղանստանն էր, որ, ԱԳ նախարար Մուլթան Սիմեդ Բախինի խոսքերով, «ողջունեց Կոսովոյի բնակիչների՝ ժողովրդավարական արժեքներին եւ մարդու իրավունքներին հետեւելու համար»: Ճանաչման որոշման մասին հենց Բրյուսելում հայտարարեցին նաեւ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Դեյվիդ Միլիբանդը եւ Ֆրանսիայի ԱԳ նախարար Բեռնար Կուշները: Միանշանակ ճանաչման կողմ արտահայտվեցին Ալբանիան եւ Իռլանդիան: Կողմ են նաեւ Բելգիան, Իտալիան, Խորվաթիան, Գերմանիան:

Փետրվարի 18-ին Կոսովոյի ժողովրդի անկախությունը, իր իսկ խոսքերով, փաստեց Տանզանիայում գտնվող ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը: «Սույն նամակով ես ամերիկացի ժողովրդի անունից ճանաչում եմ Կոսովոն որպես անկախ եւ ինքնիշխան պետություն», նշված է Կոսովոյի իշխանություններին ուղղված Բուշի նամակում: Նույն օրը երեկոյան Թոմփսոն գավառ հայտարարությամբ ճանաչեց Կոսովոյի անկախությունը: Ճանաչողներին միացել է նաեւ Ավստրալիան:

Եվրոմիության անդամ վեց երկրներ՝ Իսպանիան, Հունաստանը, Ռումինիան, Բուլղարիան, Կիպրոսն ու Սլովակիան չեն ճանաչում Կոսովոյի անկախությունը: Լեհաստանը եւ Իսրայելը գտնում են, որ այս հարցում շտապել չարժե: Պազախստանն ու Տաջիկստանը հայտարարել են, թե չեն ճանաչելու Կոսովոյի անկախությունը:

Ուկրաինան բավականին երկակի է արտահայտել իր մոտեցումը: Ընդգծելով, որ անկախության հռչակումը չի կարող դիտարկվել որպես նախադեպ, Ուկրաինայի արտգործնախարարությունը, այնուամենայնիվ, երկրների մեծամասնության դիրքորոշման կողմնակից է, ինչը տվյալ դեպքում հավատարազոր է ճանաչմանը: Մոլդովայի կառավարությունը մտահոգություն է հայտնել, նշելով, որ հարցի նման լուծումը «ոչ միայն Սերբիայի Հանրապետության տարածային ամբողջականության կամայական խախտում է, այլեւ եվրոպայում առպակայունացման լուրջ գործոն»:

Ճարտնական կառավարությունը, թեեւ նախապես կողմ էր անկախությանը, հայտարարել է, թե դեռ կսպասի անկախության հռչակմամբ միջազգային նորմերի անխախտ լինելու եւ Սերբիային չվնասելու հավաստումներին:

Տես էջ 8

Ինչպես ընտրեցին եւ չընտրեցին ուսանողները



Այս վերջին օրերին «Ազգի» խմբագրատունը հյուրընկալում է Մանկավարժական համալսարանի լրագրության բաժնի մի խմբի ուսանողուհիների, որոնք մեզ մոտ են անցկացնում իրենց գործնական պարապմունքները: Երեկ ուսանողուհիներին հանձնարարվեց խաղաղագիական պարտք կատարելուց հետո գրել ընտրությունների օրվա իրենց դիտարկումները: Ահա թե ինչ «ծանկախաղ» արեցին նրանց փոքրիկ անդրադարձերից:

Սոնա Շահինյանը նկատել է. «Երիտասարդները, ուսանողները ավելի ոգեւորված են գնում ընտրության: Գուցե ոմանք նախագահական ընտրություն առաջին անգամն են կատարում»:

5-րդ կուրսից **Սեդա Ավետիսյանը**, որն իր հոդվածը վերնագրել էր «Ինչպես ընտրեցին եւ չընտրեցին ուսանողները», նշում է. «Ուսանողներից մեկն էլ ասաց, որ միայն մարտունակ բանակ ունենալու համար է էվեակել կոնկրետ թեկնածուի օգտին: 3-րդ կուրսի մի ուսանողուհի նշեց. «Իմ ձայնը ոչ մի փոփոխություն չէր կարող մտցնել ընտրական գործընթացում: Անարդար ընտրություն է լինելու»:

3-րդ կուրսեցի **Անուշ Աղաբեկյանը** նշել է. «Ուսանողներից ոմանք պատմեցին, որ տեղամասում հերթը շատ երկար է եղել, սակայն իրենք խնդրել են զիջել, որպեսզի չուշանան գործնական պարապմունքից»:

Աղջիկների համակուրսեցի **Հայարփի Վարդանյանը** գրում է. «3-րդ անգամ եմ, որ ընտրում եմ երկրի առաջնորդ, բայց ուսանողներն ընտրություն կատարելիս բազմաթիվ խոչընդոտների են հանդիպում»: Նա ուշադրություն է հրավիրում իր համակուրսեցու պատմածի վրա. «Անուշ Աղաբեկյանն իրենց ընտրական տեղամասից հեռացել է մեծ հերթի եւ հարազատների նախընտրած թեկնածուին ընտրելու պարտադրանքի պատճառով: Նա որոշել է ընտրատեղամաս գնալ երեկոյան, երբ կրթերը հանդարտված կլինեն: Որոշ ուսանողների համար ընտրությունները պրակտիկ աշխատանքներ են: Ոստիկանական ակադեմիայի ուսանողներն ընտրատեղամասում կարգուկանոն են հաստատում: Ուսանողներից եւ աշակերտներից շատերը դասերի չեն հաճախի, վախենալով անկարգություններից, որոնք կարող են հաջորդել ընտրություններին»:

Նելլի Գրիգորյանն արձանագրում է, որ ժամը 14.00-ի դրությամբ, Քանաքեռ-Զեյթուն համայնքի տեղամասում խախտումներ չեն գրանցվել:

Մի ուսանողուհի էլ նշել էր. «Ես Մեղրի հարազի բնակչուհի եմ եւ դիմել եմ ոստիկանական բաժնմունք, սակայն ժամանակավոր բնակության վայրը հաստատող տեղեկանք եւ ընտրելի երեւանում»:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

EXIT POLL՝ նորածին «Այլանս» քաղաքացիական նախաձեռնությունից

Գոնե ակտիվ գործունեության տեսակետից նորածին «Այլանս» քաղաքացիական նախաձեռնությունը մեկ շաբաթ առաջ հայտարարեց, որ անց է կացնելու EXIT POLL: Հայտարարեց ու իրականացրեց եւ երեկ էլ ներկայացրեց համապատասխան տվյալները՝ նախապես պարզելով միջոցառման, այսպես ասած, աշխատանքային լեզուն, քանի որ ներկա էին օտարերկրյա հեռուստաընկերությունների ներկայացուցիչները եւ բացակա՝ հայրենական հեռուստաընկերությունների ներկայացուցիչները: Ի վերջո լրագրողների հետ համատեղ «Այլանսի» նախագահ **Գեւորգ Մելիքյանը** որոշեց խոսել հայերեն ու տեղեկացրեց, որ նախաձեռնությունը միավորել է շուրջ 30 երիտասարդական հասարակական կազմակերպություն եւ առանց պատվիրատուի կամ առանց հատուկ ֆինանսավորման երեւանի, էջմիածնի, Աբովյանի եւ Շիրակի մարզի մոտ 100 ընտրատեղամասի 4604 ընտրողից պարզել, թե ՀՀ նախագահի թեկնածուներից ում է ձայն տվել ընտրողը եւ որքանով է հավանական համարում երկրորդ փուլը: Պատասխան է ստացել 3055 ընտրողից, ինչը EXIT POLL-ի կազմակերպիչների գարմանքն է հարուցել, քանի որ նախնական հաշվարկներով ակնկալել են 60-70 տոկոս մերժում, բայց ստացել պատասխանողների 66 տոկոս: Այլանսցիները պարզել են, որ հարցվածներից Արթուր Բաղդասարյանին են ընտրել 474-ը՝ 15,5 տոկոս, Արտաշես Գեղամյանին՝ 40 ընտրող, 1,3 տոկոս, Տիգրան Կարապետյանին՝ 38 ընտրող, 1,2 տոկոս, Արամ Վահանի Հովհաննիսյանին՝ 8 ընտրող, 0,2 տոկոս: Վահան Հովհաննիսյանին են իրենց ձայնը տվել 195 ընտրող, որը կազմում է հարցվածների 6,4 տոկոսը, Վազգեն Մանուկյանին՝ 90 ընտրող, 2,9 տոկոս, Արամ Մելիքյանին՝ 9 ընտրող, 0,2 տոկոս: Ընտրությունների ֆավորիտ համարված թեկնածուներից Սերժ Սարգսյանին ընտրել է 1084 ՀՀ քաղաքացի, որը հարցվածների 35,5 տոկոսն է կազմում, Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին է էվեակել 1152 ընտրող, 37,7 տոկոս: Հարցվածներից 799 համարում է, որ երկրորդ փուլ ուղղակի չի լինի եւ նրանց գերակշիռ մասն ընտրել է Սերժ Սարգսյանին, 2217-ն էլ երկրորդ փուլ է ակնկալում: EXIT POLL-ն իրականացրել են 30 երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչների 15 խմբերի առավոտյան 8-ից մինչեւ ընտրատեղամասերի փակվելու ժամը՝ 20:00-ն կատարած աշխատանքի շնորհիվ, ավելին՝ «Այլանս» քաղաքացիական նախաձեռնության նախագահ Գեւորգ Մելիքյանը հավաստիացրեց, որ բացի Հայաստանի ամբագայով մտահոգված լինելուց ու երկրի ապագայի կառուցման գործում որոշակի մասնակցություն ցուցաբերելու մղումից, այլ շահադիտ չունեն քաղաքական գործընթացներով խիստ հետաքրքրված երիտասարդները, ինչպիսին իրենց համարում են այլանսցիները, եւ փորձում են ցույց տալ, որ ՀՀ երիտասարդ քաղաքացիները կարող են ակտիվորեն մասնակցել քաղաքական գործընթացներին: Ի դեմ 30 ՀԿ-ներից եւ ոչ մեկի անունը չտրվեց, բայց բարձրաձայնվեց մտքում, որ կազմակերպություններից եւ ոչ մեկը քաղաքական ուղղվածություն, կողմնորոշում չունի: Իսկ համակրանքը...

Ն. Պ.

Ըստ նախնական արդյունքների, ընտրողների 69,25 տոկոսը մասնակցել է նախագահական...

1-ին էջից

Թեկնածուներից մեկի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցներն էին նախ հայտարարում, որ ընտրությունները կեղծվում են, դրան պատասխանում էին Սերժ Սարգսյանի շտաբից՝ ամեն ինչ հանգիստ ու նորմալ է, Արտաշես Գեղամյանն ու Տիգրան Կարապետյանը չէին դժգոհում, երկրի ներկա նախագահն էր ամեն ընտրություն, այդ թվում նախագահական ընտրությունները փորձություն համարում, որից պետք է դուրս գալ ուժեղացած: Բայց, օրինակ, թեկնածուներից մեկը՝ Արթուր Բաղդասարյանը ժամը 15-ից հետո սկսեց բողոքել, թե սկսվել է մարդկանց ահաբեկման, սպառնալիքների եւ ծեծկռտուքի մթնոլորտ, կատարվել են զանգվածային ընտրախախտումներ, եւ դիտում էին ԿԸՀ-ին եւ իրավապահ մարմիններին՝ իրավիճակը կանոնակարգելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու կոչով: Այս եւ լրատվամիջոցներից մի հանիսում երեւաց ՀՅԴ գերագույն մարմնի մտահոգությունը՝ տեղի ունեցող ընտրախախտումների վերաբերյալ:

Հետաքրքրական էր ԿԸՀ-ում Վազգեն Մանուկյանի լիազոր ներկայացուցչի այն դիտարկումը, թե 9 ընտրատեղամաս այցելելով՝ պարզել են, որ նախագահի թեկնածուների մեծ մասի, այդ թվում՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձերն ներկա չեն այդ տեղամասերում: Մինչդեռ վստահված անձերի ինչ մեծ թվեր էին նշվում մինչեւ ընտրությունները: Ընդհանուր մտահոգությունների թվում էին բավական կլորիկ թվով ընտրողների խմբերի՝ մի բնակավայրից տեղափոխությունը այլ բնակավայրում ընտրելու. չի կարող այդպես լինել, որ մարդկանց մի մեծ խումբ միաժամանակ Վանաձորից, ասենք, տեղափոխվի Արաբկիրում էվեակելու, պարզ է, որ դրանից խախտման հոտ է գալիս: Թեկնածուներից Արմեն Մելիքյանի կողմնակիցներից մեկի ծեծի մասին լուր տարածվեց:

Ընդհանուր առմամբ, սակայն, ընտրությունները կարծես մեծ էմոցիաներով չէին ընթանում՝ հիմնական ֆավորիտներից երկուսի կողմնակիցների վիրտուալ հակադրությունն էր միայն զգալ տալիս, որն օրվա վերջին մի նոր՝ էթիք-փուլային դրսեւորում ունեցավ. նախ հրապարակվեց մերձելեւնական մի էթիք-փուլի արդյունքն, ըստ որի հաղթում էր Տեր-Պետրոսյանը 54,2 տոկոսով, Սերժ Սարգսյանը 24,4, Վահան Հովհաննիսյանը՝ 8,4, Արթուր Բաղդասարյանը 8,2 տոկոս են հավաքել:

Իսկ ահա բրիտանական «Պոդուլոս» հարցախուզային ընկերության էթիք-փուլի տվյալներով առաջին տեղում Սերժ Սարգսյանն էր՝ 57,1 տոկոսով, Տեր-Պետրոսյանը երկրորդ տեղում՝ 17,4 տոկոսով: Արթուր Բաղդասարյանի հավաքած քվեն 14,6 տոկոս է, Վահան Հովհաննիսյանինը՝ 5,8:

Հիմա ո՞ւմ էթիք-փուլն է ճիշտ, ու արդյոք մեր ժողովուրդը էթիք-փուլի մասերիաղ է՝ թողնում եմ միմյանց վրա էթիք-փուլ թափահարողների խղճին:

Իսկ ընդհանրապես՝ ավելի լավ է սպասենք ԿԸՀ-ի կողմից ընտրությունների նախնական արդյունքների ամփոփմանը, որն ընդամենը այսօր ժամը 20-ին է, թեեւ, ինչ արած, լեւոնականները դրան էլ չեն սպասում, օրվա կեսին արդեն հանդիսավոր են անում՝ թե հաղթել եմ, ու վերջ:

ԷՊԻԿԵՅԻ ԽՆԴԻՐ է:

ՀՅԴ գերագույն մարմինը մտահոգված է ընտրախախտումներով

Ինչպես տեղեկացանք ՀՀ նախագահի թեկնածու Վահան Հովհաննիսյանի նախընտրական շտաբից, «ՀՅԴ գերագույն մարմինը, ամփոփելով Վահան Հովհաննիսյանի նախընտրական շտաբի ունեցած նախնական տվյալները, մտահոգություն է հայտնել ընտրախախտումների վերաբերյալ: Վահան Հովհաննիսյանի նախընտրական շտաբի ոչ, ՀՅԴ գերագույն մարմնի ներկայացուցիչ **Արմեն Ռուսազգյանը** մտահոգություն հայտնեց հատկապես թիվ 7, 8, 17 ընտրատարածքներում եւ Գառնի գյուղում կատարված «աղաղակող խախտումների կապակցությամբ»: Նա նշեց, որ իրեն անհանգստացնում են թեկնածուների համակիրների միջեւ արձանագրված բախումների փաստերը: Արմեն Ռուսազգյանը տեղեկացրեց, որ իրենք մտադիր են իրավական մարմինների համապատասխան քայլերին:

Մինչեւ ուշ երեկո ՀՅԴ գերագույն մարմնում դեռ ընթանում էր արտահերթ նիստ՝ ընտրությունների եւ ընտրատարածքներում եղած ընտրախախտումների վերաբերյալ:

Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Լոռու մարզում քվեարկել է ընտրողների 67,2 տոկոսը

Երեկ Լոռու մարզում նախագահական ընտրություններն անցել են հիմնականում հանգիստ մթնոլորտում: Վանաձորի կենտրոնական եւ Տարոն-2 թաղամասում մեր այցելած 10 ընտրատեղամասերում էական խախտումներ չկային:

Թիվ 29 ընտրատարածքում (53 տեղամաս) ցուցակային 60 742 ընտրողից քվեարկել է 40 829 (67,22 տոկոս): Ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ **Ֆրունզիկ Լամբարյանից** տեղեկացանք, որ գրավոր բողոք է ստացվել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից՝ թիվ 29/21 տեղամասում բաց քվեարկության դեմքերի մասին: Եղել են նաեւ ընտրական գործընթացի թերություններ այլ տեղամասերում, որոնք հրապարակվել են:

Թիվ 30 ընտրատարածքում (33 տեղամաս) ցուցակային 53 822 ընտրողից քվեարկել է 34 923-ը: Նույն ՀԿ-ից նույնատիպ բողոք է ստացվել նաեւ այս հանձնաժողովում, որի նախագահ **Մինաս Սայադյանը** հավաստիացրեց, թե եղել են տեղում եւ բաց քվեարկության դեմք չեն հայտնաբերել: Նա տեղեկացրեց, որ թիվ 30/10 ընտրատեղամասում հանձնաժողովի ատխատանքին փորձել է խոչընդոտել Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը, որին դուրս են հրավիրել եւ թեկնածուի շտաբին առաջարկել ուրիշ մարդ ուղարկել: Վստահված անձը տեղափոխվել է թիվ 30/21 ընտրատեղամաս:

Թիվ 31 ընտրատարածքում (72 տեղամաս) ցուցակային 64 424 ընտրողից քվեարկել է 42 286 (65,64 տոկոս): Ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ **Վռամ Վանյանը** տեղեկացրեց, որ էական նշանակություն ունեցող բողոքներ չեն եղել: Նույնը հավաստիացրեց նաեւ թիվ 3 ընտրական հանձնաժողովի քարտուղար **Արարատ Ծառուկյանը**: Այս ընտրատարածքում ցուցակային 47 591 ընտրողից քվեարկել է 33 767 (70,95 տոկոս): Ընդհանուր առմամբ Լոռու մարզում քվեարկել է ընտրողների 67,2 տոկոսը:

ՄԻՆՎԱԼԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Վանաձոր

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Թող. 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՀԱՅԿ ԱՐԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ / հեռ. 529221

Հասարակական (գրական) / հեռ. 582960

Լուսանկարների սենյակ / հեռ. 581841

Հանձնարար. քարտուղարուհի / հեռ. 582483

Շտաբագրության բաժանորդագրություն / հեռ. 529353

Հանձնարարական բաժանորդագրություն «Ազգ» թերթի

Թերթի նիստերի անբողջական թե մասնակի արտատպումները թույլատրվում են միայն հղումով կամ ռադիոհեռուստատեսության առանց խմբագրության գրաբար հանձնարարության խիստ արգելում են հանձնարարվում ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի

Նիստերը չեն գրախոսում ու չեն վերադարձնում

Գ տարով յորդանները գովազդային են, որոնք՝ բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմը բացառում է խաղաղագիտական պատերազմի հնարավորությունը

Բայց Մատենադարանի մոտ անպայման կիսախմբեն

«Այսօր ժամը 15-ին Մատենադարանի մոտ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցները նշելու են իրենց թեկնածուի հաղթանակը: Եթե փորձեն կասկածի տակ առնել մեր հաղթանակը, մենք օրինականության բոլոր ձեւերով կպայքարենք հանուն այդ արդարության: Եթե անհրաժեշտ լինի, կմնանք հրապարակում այնքան ժամանակ, մինչեւ ԿԸՀ-ն հոգի կեղծիքներ անելուց», երեկ ընտրությունների ավարտից որոշներ անց Լեւոն Տեր-Պետրոսյանի շտաբի հրավիրած ասուլիսում հայտարարեցին առաջին նախագահի թիմակիցներ Նիկոլ Փաշինյանը, Ալեքսանդր Արզումանյանը եւ Գրիգոր Հարությունյանը:

Նախկին արտգործնախարար **Ալեքսանդր Արզումանյանը** համոզմունք հայտնեց, թե հերթական նախագահական ընտրությունների ժամանակ էլ իշխանություններն ապօրինություններ կատարեցին, որ հաղթի իրենց թեկնածուն, սակայն, «ի հեճուկս դրան, մեր տվյալներով, մենք հաղթել ենք հանրաքեւեռության որոշ տարածքում: Ստացվող տվյալներն ապացուցում են, որ եղել է բարձր մասնակցություն, եւ ճնշող մեծամասնությունն իր ձայնը տվել է մեր թեկնածուին՝ ՀՀ հիմնադիր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին»: Արձանագրելով իրենց թեկնածուի հաղթանակը՝ Ալեքսանդր Արզումանյանը հույս հայտնեց, թե հասարակությունն այս անգամ տեր կկանգնի իր ձայնին, որի համար իրավական եւ խաղաղական բոլոր մեթոդներով կպայքարեն նաեւ իրենք: Սա է դրդառը, որ այսօր առաջին նախագահի թիմը հավաքվելու է Մատենադարանի առջեւ:

Նիկոլ Փաշինյանը ապօրինությունների դեմքեր ներկայացրեց: Ըստ նրա, դրդառավոր Ռուբեն Հայրապետյանի հրահանգով խաղաղիներ Գագիկ Ղազարյանն ու Արսեն Խաչատրյանը շրջայցառ առեւանգվել են, ենթարկվել բռնությունների, ապօրինի ձերով զրկվել իրենց ազատությունից, դպիրել «Հարսնաֆարի» նկուղային տարածքում: Փաշինյանի փաստերով, Արաբկիրի թաղապետ Հովհաննես Շահինյանը իր համակիրների հետ բռնություն է կիրառել իրենց կտահված անձ Ռուբիկ Ամենյանի նկատմամբ: Ինչ վերաբերում է Արտվանում իրենց թիմակիցներ Երջանիկ Աբգարյանի, Գուրգեն Երիազարյանի եւ նրա որդու ծեծի դեմքերին եւ տեղեկությանը, թե բռնության ենթարկվածները ցուցմունք չեն տալիս, Փաշինյանը ցույց տվեց վերջիններիս դիմումը ոստիկանությանը, որը արձագանքի չի նժտանացել: Հետաքրքրական էր Նիկոլ Փաշինյանի մեկնաբանությունը Սերժ Սարգսյանի շտաբի տարածած հաղորդագրության վերաբերյալ: Նա նշեց, թե Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի հայտարարության մեջ որեւէ փաստ չկա եւ եզրակացրել են, որ շտաբը տվյալ տեղեկատվության հետ կապված որեւէ ասելիք չունի: Փաշինյանը նաեւ Մեղրիում եւ երեքունի զանգվածում հոսանքազրկման մասին տեղեկություններ հրապարակեց նշելով, թե այս ամենը իշխանություններն անում են երկրորդ փուլի նախապատրաստության համար:

Հղում անելով «Ա1+» ինտերնետային կայքին՝ Նիկոլ Փաշինյանը մեջբերեց «Ալֆա գա» կազմակերպության էքզիթ փուլի արդյունքները, ըստ որոնց Լեւոն Տեր-Պետրոսյանը ստացել է 54, 2, իսկ Սերժ Սարգսյանը՝ 24,4 տոկոս: 132 ընտրատեղամասերում անցկացված էքզիթ փուլի արդյունքների վերաբերյալ լրագրողներից մեկի՝ «Էքզիթ փուլն արդյունք չէ» նկատառմանը Փաշինյանն արձագանքեց՝ ասելով, թե իրենք էլ նրերին ուսումնասիրություն են արել ընտրատեղամասերի առջեւ եւ դրանով իրենց թեկնածուն էլ ավելի շատ ձայների է արժանացել:

Այսօր հանրահավաքի դուրս գալու դրդառաս առաջին նախագահի թիմակից **Գրիգոր Հարությունյանը** բացառեց խաղաղագիտական դրդառազմը՝ նկատելով, թե նման բան լինում է ժողովրդի երկու թեւերի միջեւ առճակատման դրդառագրում, բայց նման բան չկա եւ որոշ ժողովուրդը, իր կարծիքով, ընդամենը դրդարում է 2 հոգու դեմ: «Մենք բացառում ենք իրադարձությունների նման հնարավորությունը, որովհետեւ 2 հոգին չեն կարող դեմ դուրս գալ մի ամբողջ ժողովրդի», հավելեց Փաշինյանը:

«Բոլոր իրավական եւ խաղաղական մեթոդներով տեր ենք կանգնելու մեր հաղթանակին: Իշխանությունների այս գործողությունների ամբողջ իմաստը երկրորդ փուլ ստեղծելն է, բայց մեր թեկնածուն հաղթել է առաջին փուլում, եւ սա դեմք է արձանագրվի ամփոփիչ արձանագրությունում», համոզված են Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմակիցները:

Երեկոյան ժամը 21.30-ի սահմաններում՝ արդեն բրիտանական «Պոդուլուս» ընկերության էքզիթ փուլի արդյունքներով, Սերժ Սարգսյանը՝ 57,1 տոկոս, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը 17,4 տոկոս ձայն էին ստացել:

ԳՈՌԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՍԵՎ ԱՅՍՊԵՍ

Լրագրողին խանգարել են իր մասնագիտական գործունեությունն իրականացնել

Երեքշաբթի, 13 ընտրատարածքային հանձնաժողովի անդամ, «Ժառանգություն» կուսակցությունից Աննա Մարտիրոսյանը, իր ներկայացմամբ, 13/16 տեղամասում խախտումներ է նկատել՝ լցոնման, կուսակումների դեմքեր. ահազանգել է «Ժառանգություն» խմբակցության դրդառավոր Արմեն Մարտիրոսյանին: Վերջինս «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսինե Բարսեղյանի հետ ժամանել է ընտրատեղամաս՝ տեսնելու ի՞նչ է կատարվում: Սակայն նրանց նկատմամբ բռնություն է կիրառվել. Լուսինե Բարսեղյանին ոստիկանները հարվածել են, ձեռքից վերցրել տեսախցիկը, որով նա նկարահանել էր բաց քվեարկության դեմքեր, տեղամասի առջեւ կուսակումներ: Ա. Մարտիրոսյանը, ներկայանալով որդես Ազգային ժողովի դրդառավոր, փորձել է միջամտել, նրան էլ, Լուսինեին էլ հրելով հանել են տեղամասից: Խմբակցության մեկ այլ դրդառավորի՝ Զարուհի Փոսոսանջյանին, որը նույնպես մոտեցել է՝ տեղամասում կատարվողի մասին տեղեկանալու, եւս քաշքշել են ոստիկանները: Հանձնաժողովի նախագահ Վասիլ Աֆյանը այդ ժամանակ լքել է ընտրատեղամասը՝ չլսելով նրանց դիտարկումները, որ լցոնումներ են եղել եւ այդ մասին խնդրել են արձանագրել մաքյանում: Տեղում եղել են բազմաթիվ մարդիկ, «Ժառանգություն» խմբակցության անդամներ, դիտորդներ, լրագրողներ: Աննա Բաղդասարյանը եւ «Ժառանգության» մեկ այլ դրդառավոր Անահիտ Բախչյանը երեկ 18:30-ին բողոք ներկայացրին ԿԸՀ: Դիմումը ստորագրել է նաեւ լրագրող Լուսինե Բարսեղյանը:

Մ. Խ.

Փետրվար. հարատեւող վերածնունդ

1-ին էջից

Նոյտասակը մեկն էր՝ թույլ չտալ, որ ընդվզումի ալիքը տեղափոխվի ԽՍՀՄ մյուս տարածաշրջաններ: Ոմանք գտնում են, որ հենց Ղարաբաղյան շարժումն էր Խորհրդային Միության փլուզման կատալիզատորը: Դժվար է վիճարկել այս ընդումը. իրականը, տվյալ դեմքում, թերեւս այն է, որ իսկա գերտերությունը չկարողացավ կանգնեցնել ընդվզումի թափանիվը, թեպետ կոմունիստական ԽՍՀՄ-ը ազգային հուզումները ճնշելու մեծ փորձ ու հմտություն ուներ: Անշուշտ, դրդատիպ քայլեր եղան, ընդ որում՝ ամենադաժան ձեւերով, սակայն արցախահայությանը ենկի բերել չհաջողվեց:

Մեր էր շարժման ֆենոմենը: Ամենից առաջ դա միասնականության ոգին էր, որն էլ առաջնորդ ելավ համաժողովրդական ոգորումներում: Թվում է՝ միութենական, առավել եւս՝ ադրբեջանական խաղաղական իշխանությունը հենց դրանից էր ահաբեկված, որովհետեւ այլ դարաքայում բռնություններն ու կոտանումները կխեղդեին ազատասիրության ձգտումը: Կար նաեւ մեկ ուրիշ հանգամանք՝ ամեն ինչ կազմակերպված եւ օրինականորեն էր արվում Ղարաբաղում, ժամանակի դահանջին ու իրողություններին համահունչ, ուստի դժվար էր դրա դեմն առնել:

Ըստ էության, 1988-ի փետրվարից հետո Լեռնային Ղարաբաղը ոչ միայն դրսեւորեց կամարտահայտություն, այլեւ դա իրականացրեց՝ իրավականորեն ու փաստացի անջատվելով Ադրբեջանից: Հիմա արդեն բոլորին է հայտնի, որ անցած երկու տասնամյակներին ծնված ու մեծացած սերունդը, որն Ադրբեջանի ու ադրբեջանցիների մասին գիտե միայն դրդատությունից, ոչ մի դեմքում չի համաձայնի իր ճակատագիրը կապել Ադրբեջանի հետ, ազատության դայքարի դրոը հիմա նրանց մատաղ հոգիներում է փողփողում:

Արցախյան շարժման 20-ամյակին նվիրված տոնակատարությունն իր բովանդակությամբ ու ծավալով աննախադեպ է, որովհետեւ կշարունակվի ամբողջ տարվա ընթացքում: Իսկ այսօր նախատեսվում է 20 տարի առաջվա իրադարձությունների վերարտադրում՝ բազմահազարանոց երթ Ստեփանակերտի փողոցներով ու հանրահավաք Վերածնունդի հրապարակում, որին կմասնակցեն ինչպես արցախյան զոյդայքարի, այնպես էլ նոր սերնդի ներկայացուցիչները:

Վերածնունդի ոգին նոր ուժ է առնում, քանզի դա է հարատեւության գլխավոր երաշխիքը: Անկախ այն բանից, որ վերամիավորման գաղափարը այսօր փոխարինվել է անկախության դրոով, ԼՂՀ-ն կա, գոյություն ունի իբրեւ շարժման ամենաիրական արդյունք, եւ իբրեւ անտրոհելի ժառանգություն գալիք սերունդներին:

ԿԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Ստեփանակերտ

Գյումրի-Բուն ընտրատեղամասերում լուրջ խախտումների չհանդիպեցինք

Նախագահական ընտրությունների առավոտյան Գյումրիում առաջինը եղանք 34/21 ընտրատեղամասում, որը տեղավորված էր խաղաղի 7-րդ հանակդրական դրդոցի ընդարձակ ու տաք մարզադահլիճում: Սակա դրդամանները ինչպես հանձնաժողովի ատխատանքի, այնպես էլ ընտրողների ազատ քվեարկության հնարավորություն էին տալիս: Մեր այստեղ գտնվելու մոտ կես ժամվա ընթացքում հանգիստ, հանդարտ քվեարկություն էր ընթանում, ինչը հատատեցնող նաեւ Արթուր Բաղդասարյանի, Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Սերժ Սարգսյանի ներկա վստահված անձերն: Հանձնաժողովի նախագահ **Անահիտ Մարգարյանը** տեղեկացրեց, որ տեղամասի 1583 ընտրողներից այդ ժամին՝ ժամը 11-ին մոտ, քվեարկել է 111 ընտրող: Ի դեմ, այդ թիվը ճշգրիտ համընկնում էր վստահված անձանց մոտ նշվածի հետ, ինչը թերեւս ուրախալի կարելի էր համարել:

Տիկնիկային թատրոնի սրահում գտնվող 34/23 ընտրատեղամասում, որտեղ եղանք միայն անց, զուգեցինք Ա. Գեղամյանի վստահված անձ **Ժենյա Մելիոնյանի** եւ Ս. Սարգսյանի վստահված անձի՝ **Ռուբեն Պետրոսյանի** հետ: Նրանց կողմից առայժմ լուրջ դիտողություններ ու դժգոհություններ չկային, իսկ Ռ. Պետրոսյանը նաեւ նշեց, թե հանձնաժողովի անդամները շատ բարեհամբույր են, նաեւ ուշադիր են ծերերի նկատմամբ, ուշադիր հետեւում են ընտրողների անձնագրերի մեջ գրառումներին: Այստեղ քվեարկության սենյակի նախատահում, նաեւ քվեարկության սենյակում ընտրողների որոշ կուսակումներ, երբեմն էլ աղմուկ էր լինում, որին հանձնաժողովի անդամները արձագանքում էին:

28-րդ դրդոցում տեղակայված 35/21 ընտրատեղամասին մոտ մեր այցելության դահին տեսանք երկու «Գազել», որոնց այդտեղ գտնվելու դատառը թերեւս դժվար չէր կռահել: Ճիշտ է՝ երբ հետո դուրս եկանք, դրանք չկային: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ **Մարիամ Առաքելյանից** իմացանք, որ արդեն քվեարկել է մոտ 350 ընտրող: Նրանց ընդհանուր թիվն այստեղ 1339 էր՝ գումարած զինծառայողները: Ա. Սախարովի անվան իրավապաշտպան կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի տեղական դիտորդ **Գեւորգ Պետրոսյանը** նշեց, որ կա ընտրողների ակտիվություն: Ինչ վերաբերում էր դիտորդների դիտողություններին ու քվեարկության ընթացքի գնահատականին, նրանք այդ մասին իրենց գրառումներն անում են ու դրանք կներկայացնեն ընտրությունից հետո: Մեր այստեղ գտնվելու ընթացքում ականատես եղանք, թե ինչպես մի քաղաքացի, ծերի մեջ դրված քվեաթերթիկով մոտենալով քվեատուփին, չտվեց անձնագիրը կնքելու եւ այդ դատառով ծերը թողեց ու առաջ հեռացավ: Հանձնաժողովի նախագահը սահմանված կարգով մարեց նրա ձեռքից վերցված ծերով քվեաթերթիկը, բայց ասաց, որ արձանագրություն հետո կկազմի:

Նույն շենքի հետնամասում գտնվող 35/22 տեղամասի դիմաց աղմուկ էր, տարեց մի մարդ ձայնը բարձրացրած դժգոհում ու բողոքում էր: Մոտեցանք, զրուցեցինք նրա՝ թոշակառու **Սարգիս Կարապետյանի** հետ, որն ասաց՝ չեն ամաչում, կաշառք են բաժանում, եւ իմանալով լրագրող լինելս, ասաց՝ արի հենց հիմա գնանք, որ ապրիլ տես, նկարիր... Տեղամասային կենտրոնում մեր զրուցակիցներից Սախարովի անվան կազմակերպության դիտորդ **Վարդուհի Ալեքսանյանը** եւս լսել էր այդ աղմուկը եւ արձանագրել: Իսկ ներսում ամեն ինչ հանգիստ էր: Դիտորդը նաեւ իր գոհունակությունը հայտնեց հանձնաժողովի նախագահից, որը, ըստ նրա, տերին թեկուզ տեխնիկական բնույթի դիտողություններին հարկ եղած կերպով արձագանքում է:

33/71 տեղամասում, որտեղ եղանք ժամը 17-ին մոտ, ընտրական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Տաշչյանը տեղեկացրեց, որ այստեղ 1510 ընտրողներից 750-ն արդեն քվեարկել է: Ինչպես այստեղ, այնպես էլ մեր այցելած այլ տեղամասերում եղել էին նաեւ ԵԱՀԿ կամ ԱՊՀ դիտորդներ: Այստեղ «Ազատականություն եւ ժողովրդավարություն» կազմակերպության դիտորդ **Արմեն Գրիգորյանի** մեզ հայտնած մտահոգությունները համահունչ էին օրվա ընթացքում համառորեն հնչող խոսակցություններին: «Անձամբ տեսել եմ,- ասաց նա,- մոտակայքում մի «ժիգուլի» ավտոմեքենայով դարբերաբար կանգնած՝ փող են բաժանում, նաեւ ահազանգեր ունենք, որ արդեն սերն էլ են մտնում բաժանում: Տեսել, Աժ ընտրություններին այս տեղամասում մոտ 700 մարդ է մասնակցել, իսկ հիմա ժամը 17-ին արդեն 750-ն անցել է: Դա իմ ասածի հետ ուղիղ կապ ունի: Կաշառքներ նախկին ընտրություններում էլ են եղել, հիմա համաստատած ու բացահայտ է...»:

Գ. Ս.

Ազատության փաստարկները

Էջեր Ղարաբաղյան շարժման տարեգրությունից

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

1988 թվականի փետրվարի 20-ը մեզ համար Ղարաբաղյան շարժման, համաժողովրդական ցունամիի սկզբի օրացուցային ամսաթիվ չէ, այլ երեւույթ, կոչնակ: Եվ ահա առդեն քանի տարի ներկայիս սերնդի համար դա տոն է, սկիզբների սկիզբ, ակունք, թեեւ ունեցել է իր երկար ու դժվարին նախապատմությունը:

1988 թվականի փետրվարից դեռեւս շատ առաջ ես գրել եմ օրագրում. «Կյանքում ինձ բախտ է վիճակվել տեսնել բազմաթիվ մեծ գեղերի ակունքներ: Սելիգեր լճի մոտ տեսել եմ մի աղբյուր, որում, ինչպես կենդանի բջջի մեջ, դրված է Վոլգայի գենետիկ կոդը: Ցատկել եմ թելի պես բարակիկ այն առվակի վրայով, որը սեռին հոսանքներում աստիճանաբար վերածում է հզոր ու լայնահուն Դնեպրի: Եվ ամեն անգամ միտք եմ արել, թե մի ինչ-որ աստվածային կարետություն ունի ցանկացած Շարժման սկիզբ...»: Եվ ահա, թերթելով այն ժամանակվա իմ գրառումները, վերհիշում եմ այն մասին, թե երբ եւ ինչպես սկսվեց այդ ամենը, մտաբերում բուն տարեգրությունն այն անվերջանալի պայքարի, որը մենք կոչեցինք Ղարաբաղյան շարժում:

Հնում ասում էին, թե Շարժումը կյանք է: Եվ գոյություն ունեցող ամեն ինչ սկիզբ է առել Շարժումից: Նույնիսկ ինքը՝ ժամանակը ոչ միայն փիլիսոփայական կատեգորիա է, այլեւ շարժում, որը միայն մեկ չափում ունի. անցյալից՝ առպագա: Ազատության համար մղվող պայքարն էլ այդ նույն շարժումն է: Այստեղից էլ՝ Ղարաբաղյան շարժումը, որն սկսվել էր 1988 թվականի փետրվարի 20-ից շատ ավելի համար, որ զորբընկերների երջանում ընթերցել էր Արամայիս Սահակյանի «գաղափարախոսական հանցամտությամբ» լեցուն բանաստեղծությունը, որտեղ պոետը տարակուսում էր, թե ինչու իրեն չի հաջողվում բիբլիական լեռանը նայել հակառակ կողմից, երբ մարդկությունն արդեն տեսել է լուսնի հակառակ կողմը:

Հազարավոր նամակներ ուղարկեցինք ափխարհով մեկ: Ինչպես արտասահմանյան թերթերն էին որակում՝ այդ «հիմարությանը» եւ «անհեթեթությանը» հաջորդած արձագանքն այնքան բուռն էր եւ զորեղ, որ Բաքվում վախեցան: Հայտնի դարձավ, որ այն երկրների խորհրդային դեսպանատները, որտեղ հայկական մեծ գաղթօջախներ կային, ԽՍՀՄ ԱԳՆ ղեկավարությանը տեղեկացրել էին, թե ինչ վտանգ են պարունակում նման անհեթեթությունները, որոնք կարող էին պատասխան հրաչյական ռեակցիա առաջացնել:

1977 թվականին մեզ հայտնի դարձավ, որ Բաքվի կուսակցական առաջնորդն իր ուղիներով համառորեն առաջարկում է Արցախի մասին հրապարակում նախապատրաստել «Պրոլետի միրա ի սոցիալիզմա» ամսագրում: Դա մոլորակի կոմունիստական, ազատասիրական կուսակցությունների տեսական եւ տեղեկատվական հրատարակությունն էր, որ 32 լեզուներով լույս էր տեսնում 145 երկրներում՝ ԽՍԿԿ միջոցների հաշվին: Ալիեւը լավ էր հաշվարկել. բավական էր այնտեղ տպագրել իրեն անհրաժեշտ նյութը «Ղարաբաղի տեղի» մասին, որպեսզի հասարակական կարծիքում սանձին հակառակ, որպեսզի հենց նույն գրչի հարվածով Հայկական ԽՍՀ-ն վերածվեր Հայկական ԻԽՍՀ-ի: Մոսկվայի պետհամալսարանի պրոֆեսոր Հանս Եոլիսկոպոսվը գրել է այդ առնչությամբ. «Սալիհը լավ էր հասկանում, որ Անդրկովկասի իր կողմից գծված քարտեզը Հայաստանը խոցելի է դարձնում ՌԽՍՀ-ի հետ ընդհանուր սահմանների բացակայության պատճառով, ինչը փաստարկ էր նրա ձեռքին՝ հայերին ետեւաժի ու սադրանքների ենթարկելու համար»: Այնպես որ, մեր հանձարներն եւ պայծառ գլուխները հորինած բարձր հանգերն ավելի շատ ճարահատյալ դիվանագիտական հնարք էին, քան վարվելակարգ: Ճիշտ է, երբ Սերո Խանզադյանի տանն ափխատում էինք նամակի վրա, ժամանակներն այլ էին: Հետեւաբար՝ փոխվել էր նաեւ հարաբերվելու եւ դիմելաձեւի ոճը: Այդ մասին լավ գիտեր Սերո Խանզադյանը (եւ ոչ միայն նա. Սիլվա Կապուտիկյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Ջոն Կիրակոսյանը եւ շատ ուրիշներ): «Եկեք այդ դեմագոգների միքը տարենք: Բայց դրա համար դու պետք է համապատասխան մեջբերում գտնես հենց հայտնիներից՝ Բրեժնեւից»: Մեզ պետք էր ըստ արժանվույն պատասխանել Կենտրկոմի փարիսեցիական այն նախադասությանը, թե միայն ազգայնամոլը կասի. «Թող վաս արրեմ, բայց կարված լինեմ Հայաստանի հետ»:

Եվ ահա թե ինչպես պատասխանեց այդ նախադասությանը գրող-ռազմաքաղաքական, ԽՍՀՄ գրողների միության վարչության անդամ, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր, Գեղագույն խորհրդի պատգամավոր, Հայաստանի գրողների միության սկզբնական կուսակազմակերպության քարտուղար Սերո Խանզադյանը. «Բայց չէ՞ որ այդ արտահայտությունը վերաբերում է ոչ թե պարզապես Հայաստանին, այլ խորհրդային Հայաստանին: Եվ դա ասվում է այն բանից հետո, երբ դուք, թանկագին Լեոնիդ Իլիչ, նետելով խորհրդային Հայաստանի հիրավի մեծ ծաղկումը, ասացիք. «խորհրդային Հայաստանի ժողովուրդը, կոմունիստներն ու անկուսակցականները, բանվորները, գյուղացիները եւ մտավորականությունը հիանալի համաձեռում են հայրենասիրության ոգին խորհրդային մարդու մեկ այլ, ոչ պակաս արժեքավոր հատկանիշի՝ ինտերնացիոնալիզմի հետ»: Այս մեջբերումը ոչ միայն զինաթափ արեց սադդիդին, այլեւ թույլ տվեց ողջ ափխարհով մեկ հայտարարել ամենազլխավորը. «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը երբեք ինքնակամ չի ընտրել իր ներկայիս «բախտը», որպես փաստացիորեն կտրված է հայրենիքից: Եվ նման ճակատագիրն, իհարկե, ինքնին անարդարություն է, որը պետք է վերացվի:

Սերո Խանզադյանի նամակը՝ վերլուծական մեկնաբանության հետ, առաջինը տպագրեց Բելգրադի «Զարթօնք» ռամկավարական թերթը: 1977 թվականի սեպտեմբերի միայն մեկ շաբաթվա ընթացքում նամակն այնտեղ տպագրեցին նաեւ դաշնակցական «Ազդակ»-ը, ինչպես «Առաջ»-ը, սոցիալիստական «Կանչ»-ը: Այդ շրջանակի հակազդեցությամբ «Արցախի իրական տեղի հարցը» բարձրացվեց բոլոր հինգ ափսարհամասերում, որտեղ կային հայկական գաղութներ: Իսկ «Ամերիկայի ձայն»-ի հայկական բաժանմունքը կես տարի շարունակ համարյա ամեն օր պատրաստում էր հատուկ հաղորդումներ՝ մեկնաբանություններով ու արձագանքներով: Արտասահմանյան երկրներից նամակներ էին գալիս ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ Արգդրենախարարություն: Խնդրով զբաղվում էին ՊԱԿ-ում: Մոսկվան հանգիստ չէր տալիս Կարեն Դեմիրճյանին եւ գաղափարախոսության գծով Կենտկոմի քարտուղար Կարլեն Դալլաֆյանին: Պետք է խոստովանել, որ նրանք երկուսն էլ արժանավոր պահվածք դրսեւորեցին:

Խանզադյանի ուղերձը մեկ ավելորդ անգամ ցույց տվեց, որ նամակի ժանրը մարտական, ռազմավարական զենք է: Ճանր քարի տակով ջուր չի հոսում: Բավական պատանվանվեցին երկար ժամանակով: Նմանատիպ յուրահատկություն ալիք նոր ազդակ էր Ղարաբաղյան շարժման հերթական սկզբի համար: 70-ականների վերջերին եւ 80-ականների սկզբին Երեւանում, համարյա բոլոր հերթական կուսակցական ժողովներին կոմունիստները (այո՛, այո՛, հենց կոմունիստները) բարձրացնում էին Ղարաբաղի եւ Նախիջեւանի հարցը: Այդ ժամանակ արդեն տարբեր հիմնարկներում պատմենահանող սարեր էին հայտնվել, ինչը թույլ էր տալիս հազարավոր օրինակներով թռուցիկներ տարածել:

Մեծամասամբ դրանք տարածվում էին ռուսերեն լեզվով: Հայերեն թարգմանվում էին միայն Սփյուռք ուղարկելու համար: Հեղինակները գրողներ էին, գիտնականներ, ճանաչված անձնավորություններ, պատերազմի վետերաններ, սոցիոլոգներ, ի դեմ, ոչ միայն Հայաստանից, այլեւ Մոսկվայից, Լենինգրադից, Ռյազանից, Դոնի Ռոստովից եւ շատ այլ քաղաքներից: Նյութերը ոչ միայն տեղեկատվական, այլեւ լուսավորչական բնույթ էին կրում:

Վերակառուցման ժամանակներում, բացի «գլասնոստ», «դեմոկրատիա», «արագացում» բառերից, ամենագործածականներից էր նաեւ «էկոլոգիա»-ն: Ճիշտ է, երբակա միջավայրի խնդիրները ԽՍՀՄ-ում բավական բուռն կերպով քննարկվում էին նաեւ նախքան ԽՄԿԿ Կենտկոմի պարիլյան պլենումը, որը 1985 թվականի ապրիլի 23-ին ազդարարեց վերակառուցման սկիզբը: Բայց այստեղ երբակա միջավայրի պահպանման պայքարում հայտնվեց նոր ուժ՝ ցույցերը: Խորհրդային Միությունում առաջին ցույցերը տեղի ունեցան Հայաստանում: Դրանք սկզբում անցկացվում էին կուսակցական ժողովների ժամանակ դեռեւս 1986 թվականին, իսկ մեկ տարի անց, առանձնապես 1987 թվականի ամռանը եւ աշնանը, ինչ-որ մեկը երեւանի Թաստեական հրապարակը պետք է կոչեր լոնդոնյան Հայդ-պարկ, որտեղ կարելի էր հավաքվել եւ ասել այն ամենը, ինչ կուսակցվել էր հոգում:

Իսկ ժողովրդի հոգում կուսակցվել էին ոչ միայն Սեւանի ու Երեւանի խնդիրները, որոնց մասին այն ժամանակ շատ էին գրում կենտրոնական եւ տեղական մամուլում, այլեւ Նախիջեւանի եւ Ղարաբաղի խնդիրները: Այստեղ արդեն անգնահատելի դեր խաղաց Իգոր Մուրադյանը, որը մանրազնին նախապատրաստվում էր բնապահպանական յուրահանչյուր ցույցին, որն ավարտվում էր երթերով՝ ցուցադրատաներով, կարգախոսներով եւ Գորբաչովի դիմանկարներով:

Հենց այդ ժամանակ էր, որ Արցախի եւ Նախիջեւանի տարածքում բազմաթիվ ակտիվիստներ ստորագրություններ էին հավաքում: Յուրաքանչյուր մեքենագիր էջի վերեւում գրված էր. «Հանուն Հայաստանի հետ Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի միավորման», առա հաջորդում էին ազգանունը, անունը, հայրանունը, անձնագրի համարը եւ ստորագրությունը: Ավելի քան ութսուն հազար մարդ Արցախում եւ Նախիջեւանում մասնակցեցին խորհրդային իրականության համար բացառիկ այդ ստորագրահավաքին, որը ժողովրդական ինքնակազմակերպության անվիճելի ծեւ է համարվում: Քաղաքական թռուցիկների ամենաբեղմնավոր հեղինակներից մեկը՝ Սուրեն Արվազյանը այդ բոլոր ստորագրությունները հավաքեց կոտ կազմ ունեցող տասը հսկայական հատորներում: Մոսկվա ուղարկվելուց առաջ դրանք ցուցադրվեցին Հայաստանի Գրողների միության կուսժողովում:

Գուցե Ղարաբաղյան շարժումն սկսվեց խանզադյանի նամակի՞ց: Իսկ գուցե բնապահպանական եւ մուրադյանական ցույցերի՞ց: Իսկ գուցե մի ողջ ժողովրդի ստորագրություններ հավաքելու գործընթացի՞ց: Գուցե: Բայց իմ խորին համոզմամբ՝ Շարժումը եղել է միշտ, սկսած, թերեւս, տասնյոթ թվականից: Հնարավոր է՝ տասնութ, երբ Դաշնակցական հանրաքեւեությանն (սա պատմական անվանումն էր, եւ ոչ թե իմ հորինածը) առաջնորդները սկսեցին Գորիս-Լաչին-Շուշի ճանապարհի շինարարությունը: Դա նման էր հզոր գետի շարժման, որը յուրաքանչյուր վերտով ավելի ջրառատ ու կենսատու էր դառնում:

Ինձ թվում է, պետք է խոսել այդ գետի ոչ թե ակունքի, այլ վտակների մասին: Մի՞թե վտակ չդարձավ հիրավի հաջարի մարդու՝ Գրիգորի Արուտինովի, Հայաստանի ԿԿ(բ) Կենտկոմի առաջին քարտուղարի 1945 թվականի նոյեմբերին Սալիհին ուղղած նամակը, երբ բոլոր ժամանակների առաջնորդը հաղթանակից հետո, Չեսի նման դասված էր աստվածների շարք: Գրիգորի Արտեմեւիչը շատ էլ լավ գիտեր, որ հենց Սալիհնն էր 1921 թվականի հուլիսի 5-ին ՀԱԿԿ(Բ)-ի Կովկասյան բյուրոյի անդամներին անձամբ սպիտել չեղյալ հայտարեւ ընդունված նախկին որոշումը, որով էլ մի խարույկ վառեց, որը վերածվեց անվերջանալի հրդեհի: Արուտինովը չէր կարող չիմանալ, որ բացի ամենայնից գործ էր ունենալու Սալիհնի պարոլոգիկ փառամոլության հետ:

Նամակը մեծ չէր: Կազմված էր հինգ կարճ պարբերություններից, որոնցից միայն մեկն եմ մեջբերում. «Լեռնային Ղարաբաղի մարզի Հայաստանի կազմում ընդգրկելը հնարավորություն կտար տեղական կադրերին բարձրագույն կրթությունը շարունակել մայրենի լեզվով. Հայաստանի բուհերում: Մյուս կողմից էլ, Հայկական ԽՍՀ-ն կկարողանար Լեռնային Ղարաբաղի մարզից սանալ ազգային կադրեր, որոնք այլի են ընկնում իրենց գործունեությամբ եւ ներկայումս, բնականաբար, չեն կարող լիովին օգտագործվել Արդեքանում»: Հայկական ԽՍՀ-ի ղեկավարն իր նամակն ավարտում է տարածքանորեն հիմնավորված այն մտով, որ «այդ հարցի դրական լուծման դեմքում Հայաստանի Կենտկոմը եւ ժողովրդորոշ առաջարկով կմտնեն Կառավարություն, որպեսզի վերականգնվի նախկին մարզկենտրոնը՝ Շուշի քաղաքը,

ՀԱՐԱՑ

որն ավերվել էր խորհրդային կարգերի հաստատումից առաջ»: Եվ ճանի որ նամակը գրվել էր 1945 թվականի նոյեմբերին, ցանկության դեմքում կարելի է դա էլ ընդունել որպես Ղարաբաղյան շարժման սկիզբ:

Հիշեցնենք, որ այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության թիվը կազմում էր 137 հազար մարդ՝ ընդհանուր 157 հազարից: Մնացած 20 հազարի մեջ մտնում էին ադրբեջանցիներ, քրդեր, ռուսներ, հույներ, հրեաներ եւ այլն:

Ստալինն Արուտինովի նամակին արձագանքեց բացառապես ստալինավարի: Կարգադրեց Ադրբեջանին ճնշարկել այդ հարցը: Բավական լավ հիշում էին, թե նման դեպքերում քառորդ դար առաջ ինչպես էր հարց լուծում իրենց առաջին առաջնորդ Նարիմանովը: Նա Լենինին եւ Ստալինին նամակ էր գրել, որտեղ խոսվում էր ողջ մահմեդական ափխարհի կողմից ծագող սպառնալիքների մասին: Ճիշտ է, այն ժամանակ ոչ մեկն իրեն հարց չտվեց, թե այդ ինչ մահմեդական ափխարհ էր: Այնինչ խոսքն ընդամենը Թուրքիայի մասին էր: Այսքիսով Ստալինը հերթական անգամ հարցը «խեղդեց»: Իսկ խեղդ Գրիգորի Արուտինովը նույնիսկ չի մացավ էլ, որ դրանից հետո Ադրբեջանում բուռն գործունեություն ծավալվեց «Կեցցե՛, լենինյան-ստալինյան ազգային հաղթականությունը» կարգախոսի ոգի ներքո: Բագրատ Ռլուբաբյանի խոսքերով ասած, «ողջ մարզում ափխաստանի էր տարվում աղվեսային հնարքներով»:

Բոլոր գյուղերում կազմակերպվում էին ժողովներ, որտեղ հռետորները խոսում էին դարավոր բարեկամության մասին: Այն հաղցած ու ադրաս տարիներին քանկարժեք նվերներով խրախուսում էին այսպես կոչված՝ ինտերնացիոնալ հարսանիքները: Բայց ամենասարսափելին այն էր, որ տասով բանագնացների մի հոսք սկսվեց դեպի Ղարաբաղ, որպես դարաբաղցի տիկնարարներին ու բանվորներին կոչ էին անում իրենց ընտանիքներով տեղափոխվել «Կոմունիզմի մեծ կառույցներ» (Մինգեչաուրի ՀԷԿ, արդյունաբերական Սումգայիթ եւ այլն):

Այն ժամանակ Ղարաբաղում, կարծում եմ, նաեւ ողջ Հայաստանում ոչ ոք չգիտեր, որ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունում մեր պարերի ու տաբերի աչի առաջ հենց այդ ժամանակ լիովին ամայանում էին ափխարհի պես հին հայկական գյուղերը: Նույնը կատարվում էր արդեն պատմական հայկական Գարդմանում: Առայժմ դիմանում էին ԼՂԻՄ-ը (կամ այն, ինչ մնացել էր պատմական Արցախից), Գյուլիստանը (Շահումյան) եւ Գեղարքունիքը: Դիմանում էին, նեանկում է՝ պայքարում էին: Նեանկում է՝ Շարժումն արդում էր: Ղարաբաղյան շարժումը: Եվ սակայն մեզ բոլորս դանդաղ, բայց հաստատակամ գնում էիր դեպի այն օրը, որը պետք է մեր կյանքում նույնքան նշանակալից լիներ, որքան զավակի ծնունդը: Կարելի է ասել, այդ օրը մեզի տեսնում էիր ինչ-որ շոշափելի կերպով: Գիտեիր, որ այն անպայման գալու է:

1986 թվականի կեսերից սկսած եւ ողջ 1987 թվականի ընթացքում անդադար Մոսկվա էին ուղարկվում հեռագրեր եւ պատվիրված նամակներ: Դրանց հեղինակներն արդեն չէին խնդրում, այլ պահանջում էին լուծել Ղարաբաղի հարցը: Խոսք հազարավոր թղթակցությունների մասին է: 1987 թվականի դեկտեմբերի 1-ին պահանջագրով ներկայացած հայկական պատվիրակությանն ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի ընդունարանի վարիչ Ա. Կրիմինը: Դա արդեն մի ֆանտասիկ բան էր: 1988 թվականի հունվարի 4-ին Իգոր Մուրադյանը ԼՂԻՄ-ից Մոսկվա բերեց մի մեծ պատվիրակություն: Մեզի պատվիրակների հետ «հրահանգավորում» անցկացրին մոսկվյան ընդհանարկյա բնակարանում: Պատվիրակությանն ընդունեց ԽՄՀՄ Գեղագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Պ. Լ. Դեմիչեւը եւ, որ ամենակարեւորն է, ազգությունների փոխհարաբերությունների հարցերով ԽՄԿԿ Կենտկոմի Նորաստեղծ ենթաբաժնի վարիչ Վ. Ա. Միխայլովը, որը մեկ ամիս անց, փետրվարի սկզբին ընդունեց եւս մեկ պատվիրակություն Արցախից: Այդ նույն պատվիրակությանն ընդունեց նաեւ ԽՄՀՄ արտգործնախարար Ա. Ա. Գրոմիկոն: Այդ ամենը պետք էր նախապես կազմակերպել: Միեւնույն ժամանակ սփյուռքի թերթերը կանոնավորապես նյութեր էին տպագրում արցախյան խնդրի մասին: Փետրվարին առանձնակի աչի էին ընկնում Բոստոնում հրատարակվող «Միրոր Սփեթքյոր» եւ «Պայքար» ռամկավարական թերթերը:

Փետրվարի 11-ին կուսակցության Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կետրկովը հավաքեց ադարատի ափխաղողներին եւ հինգնվասի հաղորդեց, թե Բաքվից պատգամական տեղեկություն է ստացել, որում ընդգծվում է Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի միավորման հարցը ԽՄԿԿ Կենտկոմում չի ճնշարկվելու, Կրեմլում ոչ ոք չի ընդունում պատվիրակություններ ԼՂԻՄ-ից:

Մոսկվայի չէր կարող չանհանգստացնել օրեցօր ահկացող մթնոլորտը ոչ միայն Արցախում եւ Հայկական ԽՍՀ-ում, այլեւ արտասահմանում: 1988 թվականի հունվարի 25-ից մինչեւ փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում ավելի քան հարյուր մարդուց բաղկացած գրողների, գիտնականների, արհեստների, կինոգործիչների մի մեծ խմբի կազմում ես գտնվում էի ԱՄՆ-ում: Պատվիրակությունը ղեկավարում էր Խաղաղության պատգամանության կոմիտեի նախագահ Հենրիխ Բորովիկը: Ուղեւորությունն իրագործվում էր «ԽՍՀՄ-ԱՄՆ-ժողովրդական դիվանագիտություն» եզակի ծրագրի շրջանակներում: Խմբում ընդգրկված էին ափխարհահռչակ գիտնական, ֆիզիկոս-միմիկոս Նիկոլայ Ենիկոլոպովը եւ «Լատինական Ամերիկա» ամսագրի գլխավոր խմբագիր Սերգո Միկոյանը: Մեզ բաժանեցին փոքրիկ խմբերի, եւ առանձին-առանձին շրջում էինք տարբեր նահանգներում: Ամերիկացիների հետ հանդիպումների թեմաները նախապես մշակված էին: Հաճախ փոփոխում էին խմբերի կազմը: Սպացվեց այնպես, որ հերթական անգամ նույն խմբում հայտնվեցինք ես, Նիկոլայ Ենիկոլոպովը, Սերգեյ Միկոյանը եւ գրող արվեստաբան, փիլիսոփա Անդրեյ Նույկինը: Բոլորն արդեն լավ գիտեին, թե այդ օրերին ինչ էր կատարվում Արցախում, Հայաստանում եւ ԱՄՆ-ում: Բավական է ասել, որ շաս տուսով Անդրեյ Ալեքսանդրովիչ Նույկինն էր դառնալու ռուս մտավորականության լեգենդար «Դարաբաղ» կոմիտեի համանախագահը:

Ստեփանակերտից ինձ տեղեկություններ էին մատակարարում Արցախի առպագա ռազմաբժշկական ծառայության հիմնադիր, իմ մեծ բարեկամ Վալերի Մարությանը, գաղտագրախոսական բաժնում ԽՄԿԿ Կենտկոմի հրահանգիչ Լեւոն Օհանովը: Սիա այդ օրերի գրառումներից. «1988 թվականի փետրվարի 11-ին Մոսկվայի, աղաջարկով Բաքվից Ստեփանակերտ եկավ Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Կ. Ն. Կոնովալովը: Ես վստահ եմ, որ դա ոչ թե Կրեմլի առաջարկն էր, այլ իրենք՝ Ադրբեջանի ղեկավարներն էին մտնել, որ առաջինը Ստեփանակերտ գնա հենց ռուսը: Չէ՞ որ պետք էր, ինչպես ասում են՝ կարգադրանոն հասատել, այսինքն ճնշող միջոցներ ձեռնարկել: Այնպես որ՝ մի բան լինելու դեպքում ամեն ինչ կարելի էր գցել ռուսի վրա: Բայց ոչինչ չստացվեց ոչ Կոնովալովի, ոչ էլ Բաքվից ուղարկված հերթական դեսանտի մոտ: Քանզի արդեն փետրվարի 12-ին Ստեփանակերտում, Մարտակերտում եւ Հադրութում միաժամանակ տեղի էին ունենում կուսակցական-ակտիվ ակտիվի ժողովներ: Օրակարգում մեկ հարց էր. ԼՂԻՄ-ի միավորումը Հայկական ԽՍՀ-ի հետ:

Մարտունիի եւ Ասքերանի շրջաններում բախումներ տեղի ունեցան շրջանների ակտիվիստների եւ մարզի ղեկավարության միջեւ: Արհամարհելով սպառնալիքները, երկու տեղերում էլ բողոքն արտահայտեցին ցույցերով: Ամենագլխավորը կատարվեց փետրվարի 13-ին: Ուղիղ ժամը տասնմեկին Ստեփանակերտի Լենինի հուշարակում տեղի ունեցավ ոչ թե ինքնաբերական, այլ նախապես կազմակերպված առաջին ցույցը, որը տեւեց մեկ ժամ: Իբրեւ ընդունումների համար դժվար էր Կրեմլի ղեկավարությանը զեկույցներ հղելու տեսքեր կազմել: Չէ՞ որ մայր-հայրենիքի հետ միավորման պահանջը ներկայացնում էիր վերակառուցման աջակցելու կարգախոսներով, հանուն ժողովուրդների բարեկամության, հումանիստական հարցերով ՍՍԿ-ի Գլխավոր քարտուղարի օգնական Բենոն Սեւանի միջոցով կազմակերպեց իմ հանդիպումը (պատահական պես, որպես խորհրդային «ժողովրդական դիվանագիտություն» պատվիրակության անդամի եւ Հայաստանում «Լիտերատուրնայա գազետա»-ի սեփական թղթակցի) ափխարհի 29 երկրների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էր նաեւ Արեւելագիտական հայկական թեմի առաջնորդ, Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը: Արդեն տասը տարի անց հետեցին հարցեր՝ հիմնականում Ղարաբաղի մասին: Դա 1988 թվականի փետրվարի 17-ին էր: Իմ ձեռին արդեն կային տեղեկություններ այն մասին, որ ոչ միայն Ստեփանակերտի քաղաքներում, այլեւ շրջանային գործադիր կոմիտեներում գումարվում էին ժողովրդական պատգամավորների նիստեր, որոնցում ընդունվում էր բացառապես միայն մեկ որոշում՝ պատմական հայկական մարզը միավորել Հայաստանին: Ներկաների մեջ էր նաեւ ԽՄՀՄ ներկայացուցիչ Վիկտոր Ազեզդինը:

Փետրվարի 20-ից ուղիղ մեկ շաբաթ առաջ «ժողովրդական դիվանագետների» մեր պատվիրակությունը վերադարձավ տուն: Տեղի ունեցավ մի ոչ դյուրին խոսակցություն Հենրիխ Բորովիկի հետ: Այդ իմաստուն մարդն ու տաղանդավոր հրապարակախոսը շատ էլ լավ հասկանում էր ինձ: Եվ ես շնորհակալ էի նրան: Իհարկե, այն ժամանակ նա չէր կարող իմանալ, որ մեր զույգից ընդամենը մեկուկես ամիս անց իր նկարահանող խմբի հետ ժամանելու էր Լեռնային Ղարաբաղ, «Դիրքորոշում» հեղինակային ծրագրում առաջիններից մեկը որպես պատմելու այլեւ փորձելու ցուցադրել Սումգայիթի սարսափները: Ի դեմ, նույնը կարելի է ասել նաեւ Լուիզ Սիմոնի մասին, որն այն ժամանակ դժվար թե կարողանար ենթադրել, թե մի քանի ամիս անց իր դստեր, ինչպես նաեւ Մերի Նաջարյանի եւ Մայքլ Աղեն կրտսերի հետ ուղղաթիռով թռչելու են Ստեփանակերտ, հանդիպելու Արկադի Վոլսկու հետ: Սփյուռքի ներկայացուցիչների Արցախ կատարած այդ առաջին ուղեւորության մասին ես հոդված եմ գրել «Սովետական Հայաստան» թերթում, այն վերնագրելով «Առաջին ծիծեռնակը»:

Այսքիսով, 1988 թվականի փետրվարի 20-ին էր վիճակված դառնալու մեր երազանքի օրը: Հենց այդ օր, վաղ առավոտյան Լուիզ Սիմոնի հետ օդանավակայան պետք է գնայինք վայրէջքից ամբողջ երեք ժամ առաջ: Նախորդ օրը ես իմացել էի, որ Մոսկվայից ժամանում է ակադեմիկոս Աբել Աղանբեկյանը, եւ Լուիզը ցանկություն հայտնեց ծանոթանալ «վերակառուցման ճարտարապետի» հետ, ինչպես այն ժամանակ էին մեծարում հայտնի մտավորականին: Ես անընդհատ նայում էի ժամացույցին: Տարբերությունը Ստեփանակերտի հետ ութ ժամ էր: Դա նշանակում է, որ հենց այն ժամանակ, երբ մեզի օդանավակայանի ճանապարհին էինք, Ստեփանակերտում սկսվում էր ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանը:

Փետրվարի 21-ի վաղ առավոտյան ես Մոսկվայում կտեղեկանամ, որ նստաշրջանի սկիզբը չորս ժամով հետաձգվել էր: Այն սկսվել էր տեղական ժամանակով ժամը 20-ին: 149 պատգամավորներից նստաշրջանի ափխաստիճներին մասնակցել էին 110 մարդ: Այդ մասին ինձ հեռախոսով հայտնեց Վալերի Մարությանը: Ես նրան խնդրեցի ձեռքն առնել «Սովետական Ղարաբաղ» թերթը եւ բարձրաձայն կարդալ նստաշրջանի որոշման տեքստը: Նա սկսեց կարդալ. «Լսելով եւ քննարկելով ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների Մարզային խորհրդի պատգամավորների ելույթները՝ խնդրելու Ադրբեջանական եւ Հայկական ԽՍՀ-ների Գերագույն խորհուրդների միջնորդությունը՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից ԼՂԻՄ-ը հանելու եւ Հայկական ԽՍՀ-ին հանձնելու մասին, ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց. ընդառաջելով ԼՂԻՄ-ի ափխաստավորների ցանկությանը, խնդրել Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդին եւ Հայկական ԽՍՀ-ի Գերագույն խորհրդին խորին ըմբռնումով մոտենալ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին եւ լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ-ին հանձնելու հարցը, միաժամանակ ԽՍՀ Միության Գերագույն խորհրդին միջնորդել՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից հանելու եւ Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցի դրական լուծման համար»: Նույն օրը ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն օրերեսիվ կերպով իր արձագանքը հնչեցրեց ի պատասխան Ղարաբաղի մարզկոմի որոշման: Դա մի հիստերիկ ճիչ էր, որն ըստ էության սադրանքների կոչ էր անում Ադրբեջանին:

Ավելի ուշ մենք իմացանք, որ առավել ակտիվ էր եղել Եգոր Լիգաչովը, որը բառացիորեն կասեցել էր նրանց, թե ինչ-որ ծայրահեղականներ իրենց թույլ են տալիս խոսել ժողովրդի անունից: Նա նկատի ուներ «ընդառաջ գնալով ափխաստավորների իղձերին» արտահայտությունը: Քաղբյուրոյի ամենից անհամակերպի անդամն այդպես էլ չհասկացավ, որ հենց այդ արտահայտությունն էր արտացոլում անվիճելի այն փաստը, որ դեռեւս մինչեւ մարզային նստաշրջանը, Արցախի ողջ ժողովուրդը շրջանային նիստերում արդեն իր համար լուծել էր այդ հարցը: Թերեւս խորհրդային իշխանության գոյության ողջ ընթացքում չէր ընդունվել այդչափ գրագետ որեւէ որոշում՝ սահմանադրության այդպիսի պահանջմամբ:

Մեկ օր անց ինձ ուղարկեցին «Սովետական Ղարաբաղ»-ի փետրվարի 21-ի համարը: Ես պետք է գտնվեի Մոսկվայում այնքան ժամանակ, քանի դեռ չէի հանդիպել նրանց հետ, ուստի այս կամ այն չափով կախված էր այդ հարցի լուծումը: Կանոնավորապես ինձ էին ուղարկում թերթեր եւ անհրաժեշտ լուսանկարներ: Պարբերաբար զանգահարում էր նաեւ Իգոր Մուրադյանը եւ անհանգստություն հայտնում այն առիթով, որ արդեն անհնար է զսպել ժողովրդին: Գրեթե ամեն օր մի ծանր թղթապանակով, որ պատրաստել էինք Մոսկվայի Պետհամալսարանի գրադեսար Հնաս Եռիխկոդոսովի տանը, մտնում էի ԽՄԿԿ Կենտկոմի բաժինների եւ սեկցիաների վարիչների, հրահանգիչների ափխաստենչներ: Եվ ամենուր թողնում թղթապանակի մեկական օրինակ: Ինձ օգնում էին Լեոն Օհանովը, Սերգո Միկոյանը (նրա հանգուցյալ կնոջ եղբայրը ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար, Քաղբյուրոյի անդամ Ալեքսանդր Յակովլեւի օգնականն էր), Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի նախկին երկրորդ քարտուղար Գեորգի Տեր-Դազարյանը, Գորբաչովի օգնական Գեորգի Շահնազարովը: Երբ հերթը հասավ Կենտկոմի քարտուղար Յակովլեւին, ես որոշեցի Մոսկվա հրավիրել Միլվա Կարուսիկյանին:

Իսկ մինչ այդ ամեն օր տեսակավորում էի ստացվող նյութերը: Չէի բաժանվում «Սովետական Ղարաբաղ» թերթի 43-րդ համարից: Դա թերեւս ափխարհում առաջին անգամ էր, որ խորհրդային թերթը լույս էր տեսնում կիրակի օրը, բացառություն էր կազմում միայն «Պրավդան»: Կարծում եմ, ինչ-որ ժամանակ մենք ֆիլմ կնկարահանենք կամ գիրք կգրենք այն մասին, թե ինչպես 1988 թվականի փետրվարի 20-ի լույս 21-ի գիշերը հրատարակվեց թերթի այն համարը, որ նախատեսված էր փետրվարի 23-ի համար եւ նվիրված խորհրդային բանակի 70-ամյակին: «Խորհրդային բանակի դարաբաղցի ռազմահրամանատարները» վերնագրի ներքո տեղադրված էին նյութեր վեց գեներալների դիմանկարներով եւ կենսագրական տվյալներով: Ի դեմ, նրանց մեջ կար մեկ ադրբեջանցի: Այն մասին, թե ինչպես էին տղաները կարողացել տպագրել նստաշրջանի որոշումը, այն էլ կիրակի օրով, իհարկե արժե պատմել: Արդեն այն ժամերին եւ ոռիներին պարզ էր դարձել, որ Ղարաբաղն ու դարաբաղցիները ոչ թե «ոռմանտիկ վնռականորեն», այլ «գիտակցված վճռականորեն» են տրամադրված: Նրանք հասկ գիտակցում էին, որ իրենք չեն բարձրացել Արցախի եւ, հետեւաբար՝ Հայաստանի ու նրա առպագայի փրկության համար պայքարի դրոշը, այլ այդ դրոշն ընդունել են որպես եսաֆեռ հայրերի ձեռքից, որոնք բազմիցս սկսել են Ղարաբաղյան շարժումը:

Կրեմլն այդպես էլ չհասկացավ «փետրվարի 20» երեւույթի ոչ պատմական, ոչ էլ ժողովրդավարական էությունը: Կրեմլում կարելի էր լսել միայն այն մասին, թե Ղարաբաղի հիմնախնդրի դրական լուծումը կհանգեցնի վտանգավոր նախադեպի, որն իր հերթին կառաջացնի շղթայական ռեակցիա եւ երկրում սահմանների վերանայում: Իսկ կյանքը ցույց տվեց, որ նախադեպ դարձավ ոչ թե փետրվարի 20-ը, այլ այրունս Սումգայիթը, որի անպատժելիությունն էլ, Անդրեյ Սախարովի խոսքերով, հանգեցրեց բազմաթիվ «սումգայիթների» եւ առպա երկրի փլուզման:

Ինչ վերաբերում է բուն Ղարաբաղին, առպա ժամանակն է գոնե 20 տարի անց վերջապես հասկանալու, որ չկա եւ չի կարող լինել ոչ մի նախադեպ: Քանզի չի եղել եւ չկա բուն դարաբաղյան խնդիր: Եղել է եւ կա Ադրբեջանի խնդիր: Հենց 1988 թվականի փետրվարի 20-ը բացեց ափխարհի այլերը: Պարզ դարձավ, որ Ղարաբաղն իր ավելի քան երկու հարյուր հիսունական տարիներով ու եկեղեցիներով (մեծ մասն ավերված Ադրբեջանի իշխանությունների կողմից) ոչ մի կերպ չէր կարող մնալ մի պետության մեջ, որը երբեմն բնության մեջ գոյություն չի ունեցել: Այդ մասին ես չեմ ասում. այդ մասին գրում է գիտնական-պատմագետ Ե. Ա. Պախոմովը, որի դասախոսություններով էին ադրբեջանցի առաջին ուսանողները դեռ 1923 թվականին անցնում հենց նոր ստեղծված խորհրդային հանրապետության պատմությունը: Դեռ նախաբանում դասախոսությունների ժողովածուի հեղինակը գրում է. «Հրատարակելով Արեւելյան Անդրկովկասի պատմության մասին ակնարկը (ահա թե ինչպես էր կոչվում Ռուսաստանի կայսրության այդ մասը), որ ներկայումս զբաղեցրել է Ադրբեջանական Հանրապետությունը (Ն.Ա.Բ.), անհրաժեշտ եմ համարում նախադրել մի քանի բառով...»:

Ինչպես դժվար չէ գուշակել, «Արեւելյան Անդրկովկաս» տերմինը զուտ ափխարհագրական է եւ ոչինչ՝ դրանից ավելի: Սիա թե ինչ է գրում պատմագետ Պախոմովը իր մենագրության 11-րդ էջում. «Ադրբեջան անվանումը երբեմ տարածված չի եղել Արախից հյուսիս գտնվող հողերի վրա: Միայն 1917 թվականին, երբ լուծարվեց Վրաստանի, Հայաստանի եւ Արեւելյան Անդրկովկասի անդրկովկասյան կոմիսարիատը, առաջարկ ծնվեց. հիմնել մի պետություն, որը կմիավորի, այսպես կոչված՝ «ադրբեջանական թուրքերին»: Այդ պետությանը որպիզդրային կարգով (գերմաներեն՝ նախնական, ժամանակավորապես) տվեց Ադրբեջան անվանումը: Անունն այդ սահմանված էին պահպանել, քանի որ ավելի լավը չգտնվեց:

Եվ այսօր, Ղարաբաղյան շարժման 20-ամյա հոբելյանի տարում, յուրաքանչյուր ոք, ով միջազգային լիազորություններ է ստացել զբաղվելու, ինչպես ընդունված է ասել՝ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմամբ, պետք է առաջին հերթին հասկանա. մենք բոլորս գործ ունենք մի անհեթեթության հետ, երբ հինավուրց Հայաստանի պատմական նահանգը բազմաթիվ ժողովուրդների դահճի ղեկավարած կուսակցական մարմնի որոշմամբ ներառեցին դեռ երեկ գոյություն չունեցող մի պետության կազմում, որին հենց նոր էին ժամանակավոր անուն տվել «ավելի լավը չգտնելու պատճառով»:

Չի կարելի ողջ ժողովրդի համար բախտորոշ որոշումը պատանդ պահել հելսինկյան հաստատագրերի սկզբունքների հակասական մեկնաբանությունների եւ չարաբաստիկ նախադեպերի ցանցում: Դա վտանգավոր է ոչ այնքան Հայաստանի, որքան ամբողջությամբ վերցրած՝ ողջ տարածաշրջանի եւ, հետեւաբար, հաշվի ափխարհի համար: Տանկանում ենք մեզի, թե ոչ, բայց այդ հարցը հարկ կլինի վճռել առպառորեն: Քանզի ոչ միայն օրենքները, այլեւ նույնիսկ ինքը՝ ողջամտությունը, ոչինչ չարժեն՝ առանց պրդարության: Պատահական չէ, որ փետրվարի 20-ի հզոր կոչնակն առաջին հերթին կոչնակ էր արդարության, որն էլ հանգեցրեց մեզ բոլորիս այնքան անհրաժեշտ խաղաղության: ■

«Անեծք եւ օրհնանք»

Տրակտատներ տղամարդկանց մասին

Համաշխարհային պատմությանը հայտնի են աղետաբեր, հասարակական ու հոգեւորական ազդեցիկ դեմքեր, ովքեր եղել են իրենց ժամանակի ամենավառ անհատականությունները: Սերգեյ Գալոյանի «Տրակտատներ տղամարդկանց մասին» գիրքը ներկայացնում է համաշխարհային մեծությունների (Սիրանո դը Բերժերակ, Կազանովա, Սերգեյ Փառաջանով, Սերգեյ Եսենին) կյանքի պատմության հետաքրքրաշարժ դրվագներ, նոր լույսի ու եռանգի տակ փորձում ներկայացնել մեզ հայտնի մարդկանց կերպարները:

Հեղինակն առանձնահատուկ մանրամասներով բնութագրում է Հուդա Իսկարիովացուն: Գրքում բազմաթիվ փաստեր մեկնաբանում են, որ Հուդան, ավելի ճաշ ոբեւէ մեկը, հասկանում էր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ դեմքը: Այդ պատճառով էլ Աստծո Որդին նրան էր ընտրել հատուկ առաքելություն իրականացնելու համար: Հեղինակը պատմում է Հուդայի Ավետարանի մասին, նշում այն ձեռք բերելու վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ: Ավետարանի կարեւորագույն, թերեւս ամենարժեքավոր պահն է համարվում Քրիստոսին վերագրվող առաքելությունը. «Դու կգերազանցես մնացյալ բոլորին, քանզի քեզ է նախասահմանված զոհաբերության տանել մարդուն, որի մարմնում բանտարկված եմ ես»: Այս խոսքերը բացահայտում են Հուդայի ընտրյալ լինելու մասին:

Գրքի հաջորդ կերպարը Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից Պետրոսն է: Նրա թոիչքը հզոր էր, անկումը՝ դաժան: Առաքյալի մասին Ավետարանում հիշատակվում է, թե մերթ այնի էր ընկնում հզոր վճռությամբ, մերթ էլ բարոյական սարսափելի կորուստներով: Հեղինակն ասում է, որ Սիմոն Պետրոսի ուշագնությունը փորձություն եւ ոչ թշվառություն

պետք է համարել: «Դանմ ուղղված չէին ուսուցչամտին: Դա մարդու փորձությունն է, մարդու հոգեկան վավերացումը: Բայց ի տարբերություն Հուդայի, Պետրոսը մեծալալ չդարձավ, այլ կրկին բարձրացավ եւ հաստատեց իր վեհությունը... Մեղսագործվեց նա, գայթակղվեց, բայց եւ իր մեջ ուժ գտավ կրկին սրբանալու»:

Ցավագանց հետաքրքրական է հատկապես «Ինչպե՞ս սոյանեցին Պուլկինին» վերնագրով ստեղծագործությունը: Վերնագիրը շարժում է ընթերցողի հետաքրքրությունն ու սիրելի մինչեւ վերջ կարդալ ստեղծագործությունը: Գիրքն ուշագրավ փաստերով բացահայտում է Պուշկինի սնահավատությունն ու նրա հաճախակի այցելությունները տարբեր տեսակի գուշակներին: Հեղինակը բանաստեղծի թերություններից է համարում վերջինիս բռնկուն, կրքոտ բնավորությունը, ինչի հետեւանքով բանաստեղծը հաճախ էր տեղի անտեղի մարտահրավեր կազմակերպում:

«Պուշկինը շատ հաճախ էր մենամարտում: Աստծո նախախնամությամբ դրանք մահացու չէին: Երկուսդեմ ողջ էին մնում», մեջբերում է Կարամզինի խոսքերը հեղինակը: Նա համոզված է, որ Պուշկինի մահվան գլխավոր մեղավորը բանաստեղծի կինն էր՝ Նատալյա Գոնչարովա-Պուշկինան: Շատերն էին խոսում Պուշկինի կնոջ «բանաստեղծական-եթերային գեղեցկության» մասին: Շուտով Տատային (Պուշկինը կնոջն այդպես էր դիմում) սիրահետում է Դանտեսը: Այդ մասին են վկայում Դանտեսի բազմաթիվ նամակները՝ ուղղված իր խնամակալ հորը: Նամակները գտնված են գրքում, սակայն ապացուցում են Դանտեսի ինքնամոռաց սիրո մասին, որն անդրադարձավ էր: Դժվար չէ կռահել, որ բոնկուն Պուշկինի համար կնոջ դավաճանությունը առաջավորը շատ ապակ էր ինքնասիրությանը: Գոնչարովա-Դանտես սիրային կարի մասին շատերն էին խոսում եւ բնական էր, որ Պուշկինը դիտեր է քայլեր ձեռնարկեր: «Նա միայնակ դուտ եկավ սատրության դեմ, հաստատ իմանալով, որ կգոհվի: Սխրանք էր նաեւ այն, թե ինչպես էր նա մեռնում: Իսկ նա ճակատագրական կրակոցից հետո երկու օր դեռ ողջ մնաց, տարատեսակ տառապանքներ տանելով»: Վերջում հեղինակն ասում է, թե լինում են այնպիսի երջանիկ մարդիկ, որոնց համար մահը նրանց կյանքի կարեւորագույն փաստն է: Ու հիշատակում է բանաստեղծի մտերիմ ընկերոջ Վյազեմսկու խոսքերը՝ «Մահը Պուշկինի բնավորության մեջ բացահայտեց այն բոլոր լավն ու գեղեցիկը, որ ուներ»:

«Անեծք եւ օրհնանք» շարքի 2-րդ գիրքը տրակտատներ են տղամարդկանց մասին, որոնց շնորհիվ պատմության ընթացքը փոխվել է: Կերպարներ, որոնց մեջ սիրում ենք, հաճախ օրհնում, երբեմն էլ անիծում:

ՀԱՅՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսպանիայում ՀՀ պատվո հյուպատոս Լուիս Բարբերա Սապատերոյի այցը գյուղ Ալկասեր

2008-ի փետրվարի 4-ին Իսպանիայում ՀՀ պատվո հյուպատոս Լուիս Բարբերա Սապատերոն մասնակցեց Ալկասերի ծիրն. դրոցի ամենամյա «Սան Բլայն» տոնակատարությանը, որը միշտ տեղի է ունենում փետրվարի առաջին երկուշաբթի: Այդ դրոցում սովորում են 8 հայ աշակերտ:

Հյուպատոսը ծանոթացավ եւ զրուցեց հայ երեխաների, նրանց ծնողների ու տատիկների հետ, ճաշակեց ինչպես Ալկասերի, այնպես էլ հայկական ուտեստները: Ալկասերն ունի 9.253 բնակիչ, որից 148-ը հայ են:

Սան Բլայը, ինչպես վկայում է պատմությունը, ազգությամբ եղել է հայ բժիշկ եւ բուժել շատ մարդկանց: Կաթոլիկները սրբացրել են նրան եւ բժիշկ Վիլենը անվանափոխվել է Սան Բլայնի:

Հայազգի մայրերը հյուպատոսին ներկայացրեցին իրենց երեխաների կատարած աշխատանքները, հյուրասիրեցին հայկական հաղարավենիներ: Դպրոցի նախասրահը կահավորված էր Հայաստանի պատմությանը վերաբերող նկարներով, զուգակցված համապատասխան մեկնաբանություններով: Լուիս Բարբերա Սապատերոն հնարավորություն ունեցավ իսպաներեն լեզվով կարդալ հայ աշակերտների գրած շարադրությունները հայ ժողովրդի մշակույթի, ավանդույթների եւ կոլտուրայի վերաբերյալ: Ինչպես նշեց դրն հյուպատոսը «այս ամենը վկայում է իսպանա-հայկական բարեկամության, ինչպես նաեւ եվրոպական երկրի հետ մշակութային համագործակցության առկայության մասին:

Դրն հյուպատոսին ուղեկցում էր Ալկասերի հաղարապետ տիկին Ռեմեդիոս Ավիլն: Աշակերտները հյուպատոսին նվիրեցին իսպաներեն լեզվով բարգմանված հայկական հեքիաթներ, «Սան Բլայն» տոնակատարությանը նվիրված գրքույկ:

Լուիս Բարբերա Սապատերոն իր ելույթում ողջունեց միջոցառման կազմակերպիչներին եւ ներկա գտնվողներին: Լինելով Վալենսիայի համալսարանի դասախոս աշակերտներին խորհուրդ տվեց լավ սովորել, սանձալ կրթություն՝ անքերի մասնագետ դառնալու համար, անկախ այն հանգամանքից, մնալու են Իսպանիայում, թե՞ վերադառնալու են Հայաստան: Դրն Լուիս Բարբերա Սապատերոն շնորհակալություն հայտնեց Ալկասերի հաղարապետին եւ դպրոցի մանկավարժներին ու բոլոր ներկա գտնվողներին: Վերջում բոլորը դիտեցին Մեծ եղեռնի հիշատակին նվիրված կինոնկար:

ԳԵՈՐԳ ԽՈՒԴԵՍԵՓՅԱՆ
Հյուպատոսի մամլո քարտուղար

ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԳՍԱԾԸ

Ցյուրիխի թանգարանից գողացված կտավները հայտնաբերվել են

Ցյուրիխի մի թանգարանից գողացված 4 նկարները երեկ գիտեր հայտնաբերվել են նույն հաղարի հոգեբուժարանի տարածքում կայանված ավտոմեքենայում: Այդ 4 գլուխգործոցները գնահատվում են 160 մլն դոլար:

Հանձնարարական այդ հոգեբուժարանը գտնվում է թանգարանի կողքին: Հենց հոգեբուժարանի բակում է հայտնաբերվել դոնբաց տիպակ ավտոմեքենան, գողացված երեք կտավներով, որոնց վրա նշված է ցյուրիխյան թանգարանի հասցեն: Գտնված նկարների մեջ է Կլոդ Մոնեի «Կակաչի դաշտ Վետեյնեի մոտ» գլուխգործոցը: Շվեյցարացի ոստիկանները մանրամասնություններ չեն հրապարակել, միայն ասել են, որ գործողություն է իրականացվել հոգեբուժարանի տարածքում:

«Ազգը» ժամանակին գրել է փետրվարի 12-ին Ցյուրիխի թանգարանը եվրոպայի խոշորագույն մասնավոր հավաքածուներից մեկն է: Հափշտակված կտավները էվելյարացի արդյունաբերող Գեորգ Բյուելի մասնավոր հավաքածուի գործերից են եւ նրա սեփականությունն են 1950-ականներից:

Քննիչները կարծում են, որ նկարները հափշտակվել են ոչ թե պատվերով, այլ ինչ-որ չափով պատահականորեն. տարել են իրար կողքի կախված կտավներ, եւ ամբողջ գործողությունը երեք ոռոթ էլ չի տեւել: Ամենակարեւորը թերեւս առգությունն է եղել: Չորս կտավների մեջ ամենաթանկը Պոլ Սեզանի «Կարմիր ժիլետով տղան» գործն է: Մյուս երեք կտավներն են Կլոդ Մոնեի «Կակաչի դաշտ Վետեյնեի մոտ», Էդգար Դեգայի «Լյուտրիկ Լրոիկը եւ նրա դուստրը» եւ Վինսենթ Վան Գոգի «Ծաղկող շագանակենու ճյուղեր» գործերը:

ռաններից մեկում տեղի ունեցած հանդուգն կողոպուտի մասին, երբ դիմակավոր երեք հանցագործներից մեկը զենքի սպառնալիքով այցելուներին ստիպել էր պառկել հատակին, իսկ մյուս երկուսը թանգարանի գլխավոր սրահից դուրս էին բերել իմպրեսիոնիստների 4 գլուխգործոցներ: Նաեւ նշել էինք ականատեսների վկայությունները, որ գողացված կտավները տարվել են սպիտակ գույնի ինչ-որ ավտոմեքենայով: Մարդկանց ուշադրությունից չէր վրիպել, որ կողոպտիչներից մեկը գերմաներեն է խոսում սլավոնական թեթեւ շեշտադրությամբ: Խնդրո առարկա թանգարանը եվրոպայի խոշորագույն մասնավոր հավաքածուներից մեկն է: Հափշտակված կտավները էվելյարացի արդյունաբերող Գեորգ Բյուելի մասնավոր հավաքածուի գործերից են եւ նրա սեփականությունն են 1950-ականներից:

Քննիչները կարծում են, որ նկարները հափշտակվել են ոչ թե պատվերով, այլ ինչ-որ չափով պատահականորեն. տարել են իրար կողքի կախված կտավներ, եւ ամբողջ գործողությունը երեք ոռոթ էլ չի տեւել: Ամենակարեւորը թերեւս առգությունն է եղել: Չորս կտավների մեջ ամենաթանկը Պոլ Սեզանի «Կարմիր ժիլետով տղան» գործն է: Մյուս երեք կտավներն են Կլոդ Մոնեի «Կակաչի դաշտ Վետեյնեի մոտ», Էդգար Դեգայի «Լյուտրիկ Լրոիկը եւ նրա դուստրը» եւ Վինսենթ Վան Գոգի «Ծաղկող շագանակենու ճյուղեր» գործերը:

Թանգարանի տնօրենի խոսքերով, գողացված նկարներից յուրաքանչյուրը կախված է եղել ճոպանի վրա եւ միացված՝ անվտանգության առանձին համակարգի: Թանգարանում տեղակայված ազդանշանման համակարգը միանգամայն արդիական է:

Ենթադրվում է, որ նույն հանձնախումբն էր ավելի վաղ Պիկասոյի նկարներից երկուսը գողացել Պֆեֆիկան հաղարի (Ցյուրիխի մոտ) թանգարանից: «Բաժակ եւ սափոր» եւ «Ջիու գլուխ» գործերը գնահատվում են 4,5 մլն դոլար:

Պ. Ք.

Հայերը «Պատանի երաժիշտ» մրցույթի հաղթողներ

Փետրվարի 11-ին Դյուսելդորֆի Ռոբերտ Շումանի դահլիճում հաղարապետ Հայնց Վինթերվերթերի ողջույնի ուղերձից ու հաժերգային գունեղ ծրագրից հետո պատվոգրեր ու նվերներ հանձնեցին «Պատանի երաժիշտ» 45-րդ երգանային մրցույթի հաղթողներին, որոնց մեջ էլ էին գերմանացիները, պատկառելի թիվ էին ներկայացնում օտարները՝ դրանց մեջ էլ նկատելի չինացիներն էին, ճապոնացիները, նաեւ հրեաներն ու ռուսները, իսկ մեզ ոգեւորության առիթ պարգեւեցին գերմանաբնակ մեր հայրենակիցները՝ որոնց մի մասը մրցույթը շարունակելու է հաջորդ երկրամասային փուլում:

Դեռ անցյալ տարի՝ 44-րդ մրցույթին, երբ ծերուս առա ծրագիրը, շատ ուրախացա տեսնելով, որ թավշուքակահար չինացի Լի Հեն Հայնի, Բախի ստեղծագործությունների կողքին հնչեցրել է Արեմի Այվազյանի «Վաղական պարը»: Այս տարի համոզվեցի, որ սա պատահականություն համարել այնուամենայնիվ չի լինի. տարբեր տարիքի պատանի 9 դաշնակահարներ՝ իրենց ծրագրում ընդգրկել էին Առամ Խաչատրյանի փոքրածավալ ու մեծածավալ գործեր, իսկ նրանցից մեկը՝ Սոնո Բաբաջանյանի «Էլեգիան»: Եթե վերջինը հայերիս համար ընկալելի հուզումով ներկայացրեց մեր հայրենակցուհի Նարի Սեփոյանը՝ արժանանալով առաջին մրցանակի, ապա Խաչատրյանի պարագայում 20-րդ դարի մեծ կոմպոզիտորի ստեղծագործությունները կատարեցին ոչ միայն մեր կողմից հայ Անի Վիթիյոֆը (Անին եւ Ռուզը՝ Մանեն բազմիցս են հիշալ մրցույթի առաջին մրցանակակիր դարձել), այլեւ գերմանացի, չինացի, ռուս, պարսիկ ու նաեւ Բաֆվում ապրած, ապա Գերմանիա տեղափոխված 11-ամյա Անյա Մորեֆին-Ռավասդիանին: Ասել, թե նրանք բոլորն էլ հրաշալի ճանաչում են հայերին, հայ երաժշտությունը, անշուշտ ճիշտ չի լինի, ծրագրի ընտրությունը կատարում են նրանց ուսուցիչները, ովքեր մեծամասամբ նախկին ԽՍՀՄ կրթական համակարգի կրողներ են եւ իրենց «հայրենի» սահմաններին անծանոթ սաներին հուշում են, որ գեղեցիկ մեղեդի գտնելի է գտնել նաեւ ոչ այնքան շատ դրդապարզված երգահանների բնագրերում: Տարիներ շարունակ հրանցիկ հետեւելով հիշալ մրցույթի արդյունքներին մրցանակակիրների մեջ հայ երեխաների անունների միշտ էլ հանդիպել եմ՝ նրանցից երկուսին լավ եմ հիշում՝ Մարի Հունանյան (ջութակ), Աստղիկ Բեգլարյան (դաշնամուր): Այս տարի հիշալ անուններին ավելացան Դավիթ Խուրվանցի, Դանիել Հայմանի, Արփինե Բաղումյանի, Սաթենիկ Գուլումջյանի անունները:

Անշուշտ, դժվար է ասել, թե Դաշնային Գերմանիայում ապրող հայ է մասնակցել «Պատանի երաժիշտ» մրցույթի առաջին այս փուլին կամ դարձել մրցանակակիր: Կարելի է հուսալ, որ վերջին՝ Դաշնային փուլում մրցանակակիրների մեջ հայերի անունների հանդիպելու եմք:

Ռ. Հ.
Գերմանիա

Աբրահամի հերթական մրցակիցն Էլվին Այալան է

Էդիսոն Միրանդան կրկին բարշրագոշ հայտարարություններ է արել Արթուրի հասցեին

Մարտի 29-ին գերմանական Կիլա քաղաքում IBF-ի վարկածով միջին քաշում աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը հերթական՝ յոթերորդ անգամ տիտղոսի պաշտպանության համար մենամարտ կանցկացնի: Նրա մրցակիցը 27-ամյա ամերիկացի Էլվին Այալան է, որը IBF-ի վարկանիշային ցուցակում 15-րդ տեղում է: Նա այդ տեղում հայտնվել է Սերխիո Մորայի հետ մենամարտը ոչ-ոքի ավարտելու շնորհիվ: Այալան պրոֆեսիոնալ ռինգում 21 մենամարտ է անցկացրել, որից 18-ը շահել է (8-ը՝ նոկաուտով), 2-ում պարտվել է, մեկն ավարտել է ոչ-ոքի: Արթուր Աբրահամը նշել է, որ այս տարի կցանկանար միավորել աշխարհի չեմպիոնի տիտղոսները, սակայն առաջին հերթին պետք է պահպանի IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի կոչումը: Արթուրի կարծիքով ինքն այժմ գերազանց մարզավիճակում է եւ դա իր վրա կզգա մրցակիցը: Լավատեսորեն է տրամադրված նաեւ Աբրահամի մարզիչ Ուլի Վեգները. «Արթուրը շատ լավ է հանդես գալիս, բայց կարող է ավելի լավ մենամարտել: Բայց ամեն դեպքում նա Այալայի հետ մենամարտում պետք է զգոն լինի: Ամերիկացի բոքսֆամարտիկը դժվարին մրցակից է»:

Հիշեցնենք, որ WBC-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Կարլոս Գոնսալեսը Արթուրի հետ մենամարտում հրաժարվեց մասնակցել՝ հայտարարելով, որ աջակցում է Արթուրի վրա. «Այն ժամանակից ի վեր, երբ ջարդեցի ծնոտդ, դու ոչ մի լուրջ մրցակցի հետ չես մենամարտել: Դա պարզապես ծիծաղելի է, դու չես գործում այնպես, ինչպես վայել է իսկական չեմպիոնին եւ ուժեղ մրցակիցների հետ չես մենամարտում: Ինձ համար ծիծաղելի է, որ Աբրահամն ընտրել է Այալային, որը երկու անգամ պարտվել է Դենիս Բենֆիսին: Իսկ վերջինիս նոկաուտի եմ ենթարկել մեկ հարվածով: Եվ ավելի վատ է, որ նման մրցակիցներին նա հրավիրում է Գերմանիա, որտեղ մրցավարները նրա նկատմամբ պարտավորված են: Բայց Սաուերլանդ Իվենթում նա հանդիպում է Գերմանիա, որտեղ մրցավարները նրա համարձակություն ունի, թող գա ԱՄՆ՝ եւ նոր մենամարտ անցկացնի իմ հետ: Ես նրան կոչնչացնեմ»:

Բնականաբար, Արթուր Աբրահամի եւ նրա թիմակիցների պատասխանը չուշացավ: Sauerland Event պրոմոութերական ընկերությունը հայտարարել է, որ խիստ զարմացած է Միրանդայի խոսքերից, թե նոր մենամարտ է ցանկանում անցկացնել Աբրահամի հետ: Քանի որ դեռեւս անցյալ տարվա ամռանը Միրանդան մերժել էր կազմակերպության առաջարկը Արթուրի հետ կրկին մենամարտել:

Արթուր Աբրահամն էլ Միրանդայի խոսքերը պարզապես զառանցանք է համարել. «Ինչպես երեւում է, նա դեռեւս մեր մենամարտի հետեւանքներից չի ձերբազատվել: Թեեւ ծնոտս ջարդված էր, բայց նրան լավ ծեծեցի, ինչը ազդել է նրա խիզախության եւ մտավոր ունակությունների վրա: Եթե Միրանդան զանազանում է իր հոգեկան խնդիրների մասին որեւէ մեկի հետ խոսել, ապա թող դիմի հոգեբույժին»: Աբրահամի պրոմոութեր Վիլֆրեդ Զաուերլանդն էլ ինձնադով է վերաբերվել Միրանդայի հայտարարությանը, նշելով, որ Արթուրը միջին քաշում ուժեղագույնն է եւ պատրաստ է յուրաքանչյուր բոքսֆամարտիկի հետ ցանկացած վայրում մենամարտել:

ARMENPRESS/GI

Վալուեւը չեմպիոնական գոտին կվիճարկի Չագաեւի հետ

Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում կայացած մենամարտում WBA-ի վարկածով նախկին չեմպիոն Նիկոլայ Վալուեւը հաղթեց WBO-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Սերգեյ Լյախովիչին: Արդեն առաջին ռաունդից ռուսաստանցի Վալուեւը տիրեց նախաձեռնությանը՝ օգտագործելով մրցակցի նկատմամբ հասակի առավելությունը: Վալուեւի հարվածները հաճախակի էին նոքաուտային հասնում, իսկ ահա Լյախովիչը չէր հասցնում հակահարված տալ: Սակայն չնայած մեծ առավելությանը, Վալուեւին չհաջողվեց մենամարտը ժամկետից առաջ ավարտել: Հաղթողը որոշվեց միավորներով՝ 12 ռաունդանոց մենամարտից հետո (120-107, 120-108, 120-108):

Այս մենամարտն ընտրական բնույթ ուներ: Այժմ Նիկոլայ Վալուեւը իրավունք ունի աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկելու WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ռուսլան Չագաեւի հետ: Հիշեցնենք, որ հենց Չագաեւն էր անցած տարվա աորիլին չեմպիոնական գոտին խլել Վալուեւից՝ հաղթելով նրան միավորներով:

Ընդմիշտ «Ռեալի» հետ

Մադրիդի «Ռեալը» նոր պայմանագիր է կնքել իր առաջատար ֆուտբոլիստներ Ռաուլի եւ Իկեր Կասիլյասի հետ: Երկուսն էլ արտքսական ակումբի ֆուտբոլային ակադեմիայի սաներ են եւ հավատարմորեն ծառայում են թիմին: Վերջին 10 տարիներին այս ֆուտբոլիստները «Ռեալի» խորհրդանիշն են դարձել:

Մինչ նոր պայմանագրի կնքումը Ռաուլը պետք է «Ռեալում» խաղար մինչեւ 2010-ը, իսկ այժմ եւս մեկ տարով երկարաձգել է ժամկետը: Նրա պայմանագրում կետ կա, որ եթե Ռաուլը մրցաշրջանի ընթացքում 30-ից ոչ պակաս պաշտոնական խաղ անցկացնի, ապա մեխանիկորեն պայմանագրի ժամկետը կերկարաձգի եւս մեկ տարով: Ինչ վերաբերում է դարպասապահ Իկեր Կասիլյասին, ապա նրա հետ նոր պայմանագիր է կնքվել մինչեւ 2017-ի հունիսը, իսկ հետո կգործի նույն կետը, ինչ որ Ռաուլի դեպքում է:

Ռաուլը «Ռեալի» կազմում նորամուտը նշել է 1994-ին: Նա թիմի կազմում պաշտոնական մրցումներում մոտ 300 գոլ է խփել: «Ռեալում» Ռաուլը երեք անգամ դարձել է չեմպիոնների գավաթակիր: Նա առաջինն էր, որ չեմպիոնների լիգայի մրցաշարերում հասել 50 գոլի սահմանագիծը: Նա նաեւ Իսպանիայի հավաքականի պաշտության մեջ լավագույն ռմբարկուն է. 44 գոլ է խփել 102 խաղում: Անվանի ֆուտբոլիստը 5 անգամ նվաճել է Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը:

26-ամյա Կասիլյասը 3 անգամ է երկրի չեմպիոն հռչակվել, 2 անգամ էլ դարձել է չեմպիոնների գավաթակիր: Նա ազգային հավաքականում արդեն 74 խաղ է անցկացրել:

ՀԱՄԱՌՈՏ

Հայ հոկեյիստներն անհաջողության մատնվեցին

Սարաեւոյում ավարտվեց տափոգակով հոկեյի աշխարհի «C» խմբի առաջնությունը: Երեք հավաքականներ, որոնց թվում էր նաեւ ՀՀ հավաքականը, վիճարկում էին «B» խմբի միակ ուղեգիրը: Ցավոք, Հայաստանի հավաքականն անհաջող հանդես եկավ՝ միեւնույն 0-5 հաշվով զիջելով Հունաստանի եւ Բոսնիայի ընտրանիներին: Առաջնության հաղթող ճանաչվեց Հունաստանի հավաքականը, որն առաջին խաղում պարտության էր մատնել Բոսնիայի ընտրանուն (10-1):

Թայսոնը նոր առանձնատուն է գնել

Գերծանր քաշային կարգում բոքսֆամարտի աշխարհի նախկին չեմպիոն Մայք Թայսոնը նոր առանձնատուն է գնել, որի արժեքը 1,8 մլն դոլար է: Այն գտնվում է Նեւադայի նահանգի Հենդերսոն քաղաքում, որը շատ մոտ է Լաս Վեգասին: Թայսոնը գնել է բասկետբոլի ազգային ընկերակցության նախկին խաղացող Ջալեն Ռոուզի առանձնատունը:

ՀԱՄԱՌՈՏ

Առնյանը շտկում է վիճակը

Մեխիկական Մորելիա քաղաքում ընթացող շախմատի Լինարեսի մրցաշարում անհաջող մեկնարկից հետո Լեւոն Արոնյանը 2-րդ տուրում կարողացավ հաղթանակ տարավ աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդի նկատմամբ: Սպիտակներով խաղացող Անանդը չկարողացավ դիմադրավել Արոնյանի ձեռնարկած հուժկու գրոհին եւ սխալված էր հանձնվել: Երրորդ տուրում Արոնյանի մրցակիցը Թեյմուր Ռաջաբովն էր: Գրանցվեց ոչ-ոքի: Այսպիսով, 3 տուրից հետո Արոնյանը վաստակել է 1,5 միավոր եւ Պետեր Լեկոյի ու Վասիլի Իվանչուկի հետ բաժանում է 3-5-րդ տեղերը:

Առաջատարը Վեսելին Թոփալովն է: 2-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց Ռաջաբովի հետ, իսկ ահա հաջորդ տուրում բուլղարացի գրոսմայստերը հաղթեց Վասիլի Իվանչուկին: Հետաքրքրական է, որ մրցակիցների մրցախաղերը Լինարեսի մրցաշարերում բավական արդյունավետ են ստացվում: 2006-ին հաղթել էր Թոփալովը, 2007-ին՝ Իվանչուկը: Երկրորդ տեղում Վիշվանաթան Անանդն է, որն ունի 2 միավոր: Նա մրցում էր Մագնուս Կառլսենի հետ: 58-րդ քայլում Անանդը հաղթեց: Կառլսենը նախորդ տուրում ոչ-ոքի էր խաղացել Ալեխեյ Շիրովի հետ: Երկուսն էլ ունեն մեկական միավոր:

2-րդ տուրում Իվանչուկը հաղթեց Պետեր Լեկոյին, որը հաջորդ պարտիան Շիրովի հետ ավարտեց ոչ-ոքի: 4-րդ տուրում Արոնյանը սեւերով մրցելու է Իվանչուկի հետ: Թոփալովի մրցակիցը կլինի Շիրովը: Անանդը կմրցի Ռաջաբովի, Կառլսենը՝ Լեկոյի հետ:

Դավիթ Քալաշյանը միանձնյա առաջատարն է

Շախմատի «Սեռֆլոտի» մրցաշարի ուժեղագույնների մրցավեճին մասնակցող հայ շախմատիստներից առայժմ բոլորից հաջող է հանդես գալիս Կարեն Ասրյանը, որը 5 տուրից հետո վաստակել է 3,5 միավոր: Վերջին 3 տուրերում նա վաստակեց 2 միավոր: Կարենը ոչ-ոքի ավարտեց պարտիաները Անտոն Շոմոեւի ու Եվգենի Ռոմանովի հետ եւ հաղթեց Սեբաստիան Ֆյոլերին:

2,5-ական միավոր են վաստակել Վլադիմիր Հակոբյանն ու Արտաշես Մինասյանը: Հակոբյանն առայժմ իր մրցախաղերը խաղաղ արդյունքով է ավարտում: Նա ոչ-ոքի է ավարտել պարտիաները Ցուանմաո Ցիոուի, Անտե Բրկիչի եւ Արթուր Յուսուպովի հետ: Մինասյանն էլ ոչ-ոքիներ արեց Հելգի Օլաֆսոնի, Էլթայ Սաֆարլիի եւ Ալեխանդր Խալիֆմանի հետ: 1,5-ական միավորով առաջատարներն են ռուսաստանցի Յան Նեպոմնյաչչին ու իսրայելցի Մախիմ Ռոդեսայը: Նրանցից կես միավորով հետ են մնում Արտյոմ Տիմոֆեեւն ու Ալեխեյ Դրեեւը:

«A2» մրցաշարում Սամվել Տեր-Սահակյանին վերջին 3 տուրում միայն կես միավոր հաջողվեց վաստակել: Նա այժմ 2 միավոր ունի: Դավիթ Պետրոսյանը վաստակել է 2,5 միավոր, ինչպես Լեւոն Բաբուջյանը՝ 2: Այստեղ 4,5 միավորով միանձնյա առաջատարը ռուսաստանցի Մարատ Ասկարովն է:

«B» մրցաշարում 6 տուրից հետո Դավիթ Քալաշյանը 5,5 միավորով միանձնյա առաջատարն է: 6-րդ տուրում նա հաղթեց առաջատարներից մեկին՝ Նիկոլայ Օբլոբինին: 7-րդ տուրում Դավիթը կմրցի 5 միավոր ունեցող չին գրոսմայստեր Ցիեն Վանգի հետ: 4,5 միավոր ունի Վահե Բաղդասարյանը, որը ոչ-ոքի խաղաց թուրք շախմատիստ Սելիմ Ցիտուկի հետ: Իրենց ոչնչին 4-ական միավոր են գրանցել Յուրի Համբարձումյանը, Հովիկ Հայրապետյանը եւ Դմիտրի Հարությունյանը:

«C» խմբի մրցաշարում էլ հայ շախմատիստները վստահ են խաղում: 6 տուրից հետո 5-ական միավոր են վաստակել Վարդան Խոջայանն ու Խաչատուր Մեսրոպյանը, որոնք կես միավորով են գիջում աղյուսակը գլխավորող Անդրեյ Աբրամովին: Վարդանը հաղթեց Գրիգորի Տկաչովին, իսկ Խաչատուրը ոչ-ոքի խաղաց Վիկտոր Պլոտկինի հետ: 4,5-ական միավոր ունեն Տիգրան Սիմոնյանն ու Արթուր Դարաբոզյանը:

Մալդինիի ռեկորդային նվաճումը

«Պարմայի» հետ Իտալիայի «A» սերիայի առաջնության հերթական հանդիպումը «Միլանի» 40-ամյա պաշտպան Պաոլո Մալդինիի 1000-րդ խաղն էր պաշտոնական մրցումներում: Այդ խաղում Մալդինին խաղադաշտ մտավ 2-րդ խաղակեսին՝ փոխարինելով չեխ Յանկուլովսկուն: Անցկացրած 1000 հանդիպումներից 981-ում նա խաղը սկսել է մեկնարկային կազմում, իսկ 916-ում առանց փոխարինման է հանդես եկել:

«Այս թվերը կմտնեն պատմության մեջ, սակայն ափսոս, որ այսօր չհաջողվեց 3 միավոր վաստակել: Ինչ արած, յուրաքանչյուր թիմ էլ վերելքներ ու վայրէջքներ է ունենում: 1000-րդ խաղը կցանկանայի նվիրել ընտանիքիս, հատկապես կնոջս, որը մշտապես իմ կողքին է եւ ամեն հարցում աջակցում է ինձ», նշել է Պաոլո Մալդինին:

Պաոլո Մալդինին «Միլանի» խորհրդանիշն է: Նա 1994-ի աշխարհի փոխչեմպիոն է, 1990-ին դարձել է բրոնզե medալակիր, 2000-ի Եվրոպայի առաջնությունում 2-րդ տեղն է զբաղեցրել: Նա Իտալիայի ազգային հավաքականում 126 խաղ է անցկացրել: «Միլանի» կազմում Մալդինին մի շարք տիտղոսների է արժանացել նաեւ Իտալիայի առաջնություններում, գավաթի եւ Սուպերգավաթի խաղարկություններում: Հունիսին լրանում է Մալդինիի 40-ամյակը, ուստի կարելի է վստահորեն ասել, որ նա համաշխարհային ֆուտբոլի կենդանի լեգենդ է:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրը օրին

Ընտրախախտումներ եղե՞լ են

Հենց այդ հարցը տվեցինք ՀՀ նախագահի թեկնածուների շտաբների դաստախանատուներին ընտրության ավարտից 15 ոռմբ առաջ: Թեկնածու Արամ Հարությունյանի շտաբի ոմեն **Վալերի Սարգսյանը** նշեց, որ իրենց թեկնածուի վստահված անձերի որեւէ խախտում չեն նկատել: Թեկնածու Արման Մելիքյանի շտաբի ոմեն **Էլեանորա Ասատրյանը** տեղեկացրեց, որ մեկ դեռոմ է գտնվել, 8/21 տեղամասում իրենց վստահված անձ Պարգեւ Մնացականյանը թեթի է ենթարկվել ու տեղափոխվել Մալաթիայի հիվանդանոց: **«Ազգ»** հեռախոսով զրուցեց Պ. Մնացականյանի հետ, ահա թե ինչ դատեց նա: «Ես կեղծ քվեաթերթիկ նկատեցի մեկ ընտրողի մոտ, որը քվեարկած թերթիկը դրեց նուրի մեջ, իսկ մաքուր թերթիկը դրեց գրպանը: Ես փորձեցի կանգնել, այդ ոռոթին նեղ մտան բուլվարներ ու ինձ թեթի ենթարկեցին: Ոստիկանները անգամ չէին միջամտում, լուռ կանգնած էին: Ինձ շատոգնությունով տարան հիվանդանոց ու դարձվեց, որ ես ստացել եմ ոդի կոտրվածք, ուղեղի ցնցում եւ դեռ չգիտեմ, թե ինչ կարող է լինի: Ես ստորագրությամբ տուն եմ թվել, ոռվիդեսու մայրս կոտրվածքներով հիվանդ դառնած է: Առդեմ 3 շատոգնություն է թվել ու ցավերս չեն անցնում: Շենգավիթի ոստիկանությունից եկան, կիսաս-դոսա բացատրություն գրեցին ու գնացին: Ես հիմա ցավազրկող դեղերի ազդեցության տակ էտոթս դառնած եմ»:

Թեկնածու Տիգրան Կարապետյանի շտաբի ոմեն՝ **Կարապետ Հակոբյանից** տեղեկացանք, որ իրենց վստահված անձը զանգահարել է շտաբ ու տեղեկացրել, որ Թալինի շրջանի Առագածավանը հոսանազրկվել է: Ուրիշ ընտրախախտում կամ անօրինականություն չեն նկատել: Թեկնածու՝ Արաբես Գեղամյանի շտաբի ոմեն **Ալեքսան Կարապետյանը** տեղեկացրեց, որ իրենց վստահված անձերի ընտրախախտումներ չեն նկատել: Եղել են մանր-մունր բաներ, որոնք տեղում՝ շտկել են: «Բայց նայեք, ասաց ոռն Կարապետյանը, ինտերնետը լցրել են տարբեր տեսակի ինֆորմացիաներով: Մեզի եւ հաղթում, եւ մարզեում մեր վստահված անձանց հանձնարարեցինք ճշտել եւ դարձվեց, որ դրանցից ոչ մեկը չի համապատասխանում իսկությանը»:

Թեկնածու Վազգեն Մանուկյանի շտաբի ոմեն **Սամվել Շահինյանը** խորհուրդ տվեց բացել իրենց էլեկտրոնային կայքէջը: Այդպես էլ արեցինք, կայքէջում զետեղված էր ընտրախախտումների մասին դատմող 6 դեռոմ, բայց հանի որ դատաստանները դրանց մասին տեղեկություն **«Ազգ»** չի տացել, ուստի դրանք չենք հրապարակում մինչեւ ճշտվելը:

Թեկնածու Արթուր Բաղդասարյանի շտաբից մամուլի դատասխանատու **Սուսաննա Աբրահամյանի** անունից մեզ տեղեկացրին, որ գանգվել է 15 ընտրախախտում, որոնք շտաբ են փոխանցել ընտրողներն ու վստահված անձերը: Սակայն շտաբից որեւէ վստահված անձի անուն, ազգանուն չնշեցին ահազանգի մասին տեղեկություն հայտնողներից: Մյուս թեկնածուների շտաբներից հնարավոր չեղավ ճշտել, ժողովի էին նստել:

ՄԵՐԻԱՆ ՄԵՐԱՐՅԱՆ

«Անկախ» Կոսովո՝ դառակտված Եվրոմիությա՞մբ

1-ին էջից

Չինաստանն, իր հերթին, մտահոգություն է հայտնել, ընդգծելով, որ դա կարող է տպատնաչ Բալկանների անվտանգությանն ու կայունությանը: Միակողմանի հռչակումից դժգոհ է նաեւ Ինդոնեզիան:

Սերբական իշխանությունները, բնականաբար, հայտարարել են, որ երբեք չեն ճանաչի Կոսովոյի անկախությունը: «Այդ կեղծ պետության հետեւում ՆԱՏՕ-ի շահերն են», անկախության հռչակման օրն իսկ հայտարարեց Սերբիայի վարչապետ Վոյսլավ Կոշտունիցան: Ռուսաստանի արտգործնախարարությունը արդեն ՄԱԿ-ի ԱԽ փակ ֆնարկումից հետո հայտարարեց, թե աջակցում է Սերբիայի դեկավարությանը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հրաժարվեց Ռուսաստանի եւ Սերբիայի պահանջով Անվտանգության խորհրդի նիստում Կոսովոյի անկախության հռչակումը անօրինական հայտարարելու գործընթաց սկսել: Ամեն դեպքում, ֆնարկմանը անկախության ճանաչմանը դեմ արտահայտվեցին ոչ միայն Ռուսաստանը եւ Սերբիան, այլեւ Չինաստանը, ՀԱՀ-ը, Վրաստանը, Լիբիան եւ Ինդոնեզիան:

Ինչպես արդեն տեղեկացրել է **«Ազգ»**, Կոսովոյի անկախացումը նախկին Հարավսլավիայի տոհման վերջին փուլն է: 1990-ականներին երկի տոհումն սկսվեց Սլովենիայի, Խորվաթիայի, Մակեդոնիայի, Բոսնիա-Հերցեգովինայի եւ ապա Չեռնոգորիայի անկախացմամբ: Իսկ Կոսովոն փաստորեն անկախ է 1999-ից, երբ ՆԱՏՕ-ի օդուժի հարվածներն այնտեղից դուրս մղեցին սերբական զորքերին:

Եվրոմիությունն, իր հերթին, մտադիր է ոչ միայն անմիջապես ճանաչել ինքնահռչակ նոր պետությունը, այլեւ դաստանատիկանական ուժեր ուղարկել այնտեղ: Առաջիկա եռաթ եմ-ը Պրիշտինա կուղարկի երկու հազար ոստիկաններից, դատավորներից, մասնավորներից եւ դատախազներից կազմված հատուկ քաղաքացիական առաքելություն (EULEX):

Ամեն դեպքում, Եվրոմիությունը եւ ՆԱՏՕ-ն փետրվարի 18-ին հանդես եկան հայտարարությամբ՝ իրենց վրա վերցնելով Կոսովոյում անվտանգության ապահովման դատասխանատվությունը:

Կոսովոն, զարգացման վեկտորները մեր տարածաշրջանում եւ հակամարտությունները

Աբխազիայի առաջնորդ Սերգեյ Բաղապշն արդեն իսկ հայտարարել է, թե Աբխազիան եւ Հարավային Օսիան կդիմեն Ռուսաստանին, ԱՊՀ մյուս երկրներին եւ ՄԱԿ-ին՝ իրենց անկախության ճանաչման խնդրանքով, քանի որ Կոսովոյում իրավիճակը նախադեպ է: Հարավային Օսիայի առաջնորդ Էդուարդ Կոկոյտին էլ ասվածին հավելել է, որ Կոսովոյում տեղի ունեցածը «Աբխազիայում եւ Հարավային Օսիայում տեղի է ունեցել դեռեւս 17 տարի առաջ»:

Սրա ֆոնին Վրաստանը բնավ էլ չի շտապում Կոսովոյի ճանաչման հարցում՝ հիմնական շեշտադրում անելով աբխազական եւ հարավօսական հակամարտությունների կարգավորմամբ Կոսովոյի շուրջը ստեղծված իրավիճակի հետագա զարգացումների ազդեցության վրա: Ավելին, երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին խորհուրդ չի տվել Կոսովոն դիտարկել նախադեպ աբխազական եւ հարավօսական հակամարտությունների կարգավորման համար կամ էլ դրանց ճանաչումը մատուցել որպես հակադարձում Կոսովոյի կողմից անկախության միակողմանի հռչակմանը:

Տվյալ դեպքում Սաակաշվիլին նկատի ունի Ռուսաստանի բազմիցս հնչեցրած այն հայտարարությունները, թե Կոսովոյի անկախության ճանաչման դեպքում կճանաչի Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ինքնահռչակ հանրապետությունների անկախությունը:

Հետաքրքրական է, որ երկու դեպքում էլ խոսք չի գնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման մասին, այն նույն տրամաբանությամբ, ինչպիսին կիրառական է համարվում մյուս երկու հակամարտությունների դեպքում: Միեւնույն ժամանակ, Կոսովոյի անկախությանն օգտին հանիցս արտահայտված եւ անմիջապես ճանաչած Միացյալ Նահանգներն, ի դեմս Ադրբեջանում այդ երկրի դեսպանության, հայտարարում է. «Կոսովոն առանձնանում է իր յուրահատկությամբ, եւ նախադեպ չի ստեղծում մյուս տարածաշրջանների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի համար»:

Ադրբեջանական կայքէջերը հայտարարությունից մեջբերում են. «Միացյալ Նահանգները, ճանաչելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը, կողմնակից է հակամարտության խաղաղ եւ համաձայնեցված կարգավորմանը: Միեւնույն ժամանակ հայտարարում են, որ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը պետք է որոշվի միջազգային համաձայնագրերով: Հարցի լուծման ռազմական կամ փոխզիջման ուղեգծերից դուրս եկող բոլոր փորձերը կարող են վնասել Կովկասյան տարածաշրջանի խաղաղությունն ու կայունությունը»:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա առայժմ արձագանքել է Սերժ Սարգսյանը: Ըստ նրա, Կոսովոյի անկախության հռչակումը նախադեպ չէ Լեռնային Ղարաբաղի համար, սակայն, միեւնույն ժամանակ, Կոսովոյից դրական ազդակ է ստացվել ԼՂՀ բնակչության իրավունքների պաշտպանության հարցում: Որպես գործակալության փոխանցմամբ, Սարգսյանը նշել է, որ Ղարաբաղն ու Կոսովոն տարբեր ուղիներով են գնացել դեպի անկախություն: «Լեռնային Ղարաբաղն անկախ է արդեն շուրջ 17 տարի, թեեւ դա դեռեւս ոչ ոք չի ճանաչել: ԽՍՀՄ օրենքները թույլ էին տալիս դուրս գալ խորհրդային Միության կազմից, եւ երբ Ադրբեջանը դուրս եկավ ԽՍՀՄ կազմից, ապա Ղարաբաղը օգտվեց դրանից եւ հռչակեց իր անկախությունը», պարզաբանել է Սերժ Սարգսյանը:

Վրաստանը եւ Հայաստանը կհամագործակցեն

Վրաստանի խորհրդարանը վավերացրել է Վրաստանի եւ Հայաստանի միջեւ մաքսային հարցերում վարչական փոխօգնության համաձայնագիրը, հաղորդում է «Կավկազպրեսը»: Համաձայնագիրը կնքվել է 2007 թվականի հոկտեմբերի 15-ին, Երեւանում: Ըստ Վրաստանի ֆինանսների նախարարության տեղեկատվության, տվյալ համաձայնագրի նպատակը մաքսային հարցերում վարչական փոխօգնության հարցերի կարգավորումն է, որը հիմնված կլինի երկկողմ համաձայնեցված իրավական դրույթների վրա: «Հայաստանի հանրապետությունը Վրաստանի կարեւորագույն առեւտրաշնչական գործընկերներից մեկն է, որի հետ տարեցտարի աճում է առեւտրաշրջանառությունը», հայտարարում են վրացական նախարարությունում:

Դատախազությունը հերքում է

Դատախազությունը տարածել է հաղորդագրություն, որ «Օրինաց երկիր» կուսակցության շտաբից 19.02.08 թ. ՀՀ գլխավոր դատախազությունում ահազանգ էր ստացվել թիվ 13/16 ընտրատեղամասում քվեաթերթիկների լցոնման դեպքի վերաբերյալ՝ որոշ տեղեկատվության աղբյուր մատնանշելով թիվ 13 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ, ՕԵԿ ներկայացուցիչ Իվան Ասատրյանին: Ահազանգի ստուգման ընթացքում Ի. Ասատրյանը հերքել է լցոնման փաստը եւ էրեբունի ու Նուբարաշեն համայնքների դատախազության ավագ դատախազ է. Մարտիրոսյանի հարցմանն ի պատասխան նշել, որ լցոնման մասին հեռախոսով իրեն հայտնել էին «Ժառանգություն» կուսակցության դիտորդները, սակայն հետագայում թիվ 13/16 ՏԸՀ անդամ, ՕԵԿ ներկայացուցիչ Նազիկ Օհանյանի միջոցով դարձել է, որ լցոնման դեպք նշված տեղամասում տեղի չի ունեցել:

Հոդվածագիրը «ինքնաբացահայտվեց»

Մեր թերթի փետրվարի 16-ի համարում ուշադրություն էինք դարձրել այն մասին, թե **«Ազգի»** նախորդ օրվա համարում լույս տեսած «Առաջ, դեպի բացարձակ իշխանություն» վերնագրով հոդվածի հեղինակը ոչ թե Աժ դատգամավոր Վիկտոր Դալլաֆյանն է, այլ «Վ. Դալլաֆյան» ստորագրությամբ մեզ անհայտ անձ, որի գրությունը տպագրել էինք իր շահեկան բովանդակության համար: Երեկ «ինքնաբացահայտվեց» մեր հեղինակը՝ Երեւանի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Վահագն Դալլաֆյանը, որի կարճ նամակը՝ ստորեւ: Մինչ այդ, հիշեցնենք, որ մենք սիրում ենք մարդկանց անունը գրել լրիվ՝ անուն-ազգանունով, հետեւաբար հրաժարվեք սովետական ընկալյալ վաս սովորությունից եւ ներկայացեք լրիվ անուն-ազգանունով, հարգելի նամակագիրներ:

«Ազգի» հարգելի խմբագրություն: Շնորհակալություն եմ հայտնում իմ նախորդ նամակին արձագանքելու եւ հոդվածը տպագրելու համար: Վիկտոր Դալլաֆյանի հետ կապված վրիպմանն արդեն ծանոթ եմ, ուստի այդ հարցին չեմ անդրադառնում: Համոզվելով ձեր՝ հասարակության մեջ առկա ամենատարբեր տրամադրություններն ու կարծիքները ներկայացնելու հաղարականության մեջ՝ հուսով եմ, որ ապագայում դեռ հնարավորություն կունենամ ձեր թերթի էջերում կարծիս արտահայտելու»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (դատվիրատու) ՊԳԳ-ԳՀԱՊՁԲ-08/6 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար բլանկների ձեռքբերման նպատակով:**

Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել դատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Ի.Քոչարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 17.00:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (դատվիրատու) «ՊԳԳ-ՍԲԱՊՁԲ-08/3» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», «Բեջ-գալ» ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել դատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Ա. Մարգարյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 11.30-ն:

Կենտրոնական բանկի խորհրդի որոշումների մասին

Կենտրոնական բանկի խորհրդի փետրվարի 15-ի որոշումներով անհատ ձեռնարկատեր Լիանա Դանիելյանին տրամադրվել է գրավատան կազմակերպման լիցենզիա, իսկ «Փարվանա վճարահաշվարկային կազմակերպություն» ՓԲԸ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը սացել է «Կոնտակտ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն:

ԿԲ մամուլի ծառայություն

ՊՈՂՈՏԵՔ ՀԱՄԱՐ ՀԱՆԵՔԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Գանարեքեղեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման դատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Անեքինան: Տիրաժը՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 19.02.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: